Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 60 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 14 ՄԱՐՏ 1884 (Ն. Տ.) 26 ՄԱՐՏ — 28 ՃԻՄԱԶԻԼ ԷՎՎԷԼ 1301

ՊԱՅՄԱՆՔ

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 դուրուշ երկու անգամի համար 2 դուրուշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։

Օրագրոյս վերաբերեալ Նամակ կամ որ և իցէ գրութիւն պէտք է ուղղել

«Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ Ղալաթիա, Իզմիրլի օղլու խանի, թ. 19.

Իսկ զանազաներէն հետեւեալ հասցէին՝

درعلیه‌ده غلطه‌ده ازمیرلی اوغلی خانده ۱۹ نمروده

{ ارەولك } غزته‌سی اداره‌سنه

# ԱՐԵՒԵԼՔ

## ՕՐԱԳԻՐ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| Պոլսոյ համար | Տարեկան | դահեկան արծաթ | 200 |
| « « | Վեցամսեայ | « « | 100 |
| « « | Եռամսեայ | « « | 50 |
| « « | Ամսական | « « | 20 |
| « « | Հատով | « « | 1 |
| Գաւառաց համար | Տարեկան | « « | 240 |
| « « | Վեցամսեայ | « « | 120 |
| « « | Եռամսեայ | « « | 60 |
| Օտար երկիրներ | Տարեկան | Ֆրանք | 56 |
| » « | Վեցամսեայ | « | 28 |

Դուրս ղրկուած լրագրաց ճամբու ծախքը Խմբագրութեան վրայ է։

40 ՓԱՐԱ

Արեւելք իւր շնորհակալութիւնները կը փութայ յայտնել այն ամեն անձանց, որք առաջին օրէն սկսեալ փութացին քաջալերել այս ձեռնարկը՝ չխնայելով նիւթական և բարոյական ո՛ և է աջակցութիւն։

Կ. Պոլսէ ինչպէս նաեւ գաւառներէ և օտար երկիրներէ հասած շնորհաւորութեան գրութեանց, և Արեւելքի բարեկամաց բարեմաղթութեանց, Արեւելք ներկայիս իւր ջերմ շնորհակալութիւնները կը յայտնէ, և կը խնդրէ որ ներողամիտ լինին եթէ չէ համաձայնած շատերու փափագանաց և չէ ուզած հրատարակել իրեն հասած գովեստներն ու բարեմաղթութիւններն։

Այս առթիւ մասնաւոր շնորհակալութիւններ՝ Տփղիսի պատուական օրագրաց և յատկապէս Մշակի, որոց բարեկամական արտայայտութիւններն առ մեզ՝ անդր քան զակնկալիս եղան։

Արեւելքի վարչական ժողովը օր ըստ օրէ հետամուտ է նորանոր բարեփոխութիւններով օրագրիս կատարելագործութեան նկատիւ, և իւր գտած ընդունելութենէն քաջալերեալ՝ որոշեց և Բաժանորդական Ընկերութեան ընդհանուր ժողովոյ երէկի նստին մէջ հաւանութիւն ստացաւ իւր տպարանն ամբողջացնելու, և քիչ օրէն թերթը պիտի տպուի իւր մասնաւոր մամլով, որ Փարիզի գլխաւոր գործարաններէն միոյն կողմանէ ճամբայ կ'ելլէ մօտերս։

Արեւելքի յաջողութիւնն ապացոյց մ'եւս է թէ Ազգին ճշմարիտ շահուց նպաստող ամեն ձեռնարկութիւնք և զոհողութիւնք միշտ ըստ արժանւոյն կը գնահատուին։

## Կ. ՊՈԼԻՍ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 14 ՄԱՐՏ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ԶԷՆԸՆԿԵՑՈՒԹԻՒՆ

Կարեւոր յօդուած մը հրատարակուեցաւ մօտերս Պրիւսէլի Լը Նօռ շաբաթաթերթին մէջ, սա խմաստով թէ Եւրոպական տէրութիւնք միահաղոյն նուազեցնեն իրենց զինուորական ոյժերը։ Նօռ արտաքին խնդրոց մէջ ընդհանրապէս Ռուսիոյ Արտաքին գործոց նախարարութեան կարծիքը կը ներկայացնէ, և այս խնդրոյ մասին իւր տեսութիւնք աւելի կշիռ ունին քան ուրիշ բազում եւրոպական թերթերու նմանօրինակ տեսութիւնք։ Ուստի, երբ Նօռի պէս թերթ մը կը փաստաբանէ Եւրոպական միահաղոյն զէնընկեցութեան գաղափար, կրնանք եզրակացնել, նախ, թէ նոյն ինքն Ռուսիա կը փափաքի նուազեցնել իւր զինուորական ծախքեր ու պատրաստ ոյժեր, և երկրորդ, թէ ռուս կառավարութիւնն, իւր փափաքն այսպէս ի լուր աշխարհի հռչակելէ առաջ, խորհրդակցած է Կեդրոնական Եւրոպիոյ կայսերական տէրութեանց հետ, որոց մտերիմ բարեկամութիւնը կը վայելէ։ Եւրոպական բոլոր մեծ տէրութեանց միջեւ կեցող խաղաղական յարաբերութեանց ակնարկելով, Նօռ կ'ըսէ. «Այն բարեբաստ կացութիւն, ուր բազում տարիներէ հետէ առաջին անգամ լինելով կը գտնուի Եւրոպա, և որ ապագայ ապահովութեան առատ խոստումներ կու տայ Եւրոպական ազգաց, պէտք է որ զանոնք մղէ թեթեւցնելու իրենց զինուորական բեռներն որոց ներքեւ ծանրապէս կը ճնշուին։ Անշուշտ չենք ուրանար նիւթական դժուարութիւնները, զորս մասնական զէնընկեցութիւն մը պիտի ներկայէ երբ հարկ լինի տեսականէն գործնականի անցնել։ Մեր ցոյց տալ ուզածը սա է միայն թէ պարագայք երբեք այնչափ նպաստաւոր չեն եղած այս գաղափարի գործադրման, որչափ են այժմ։ Ցարդ զէնընկեցութեան գաղափարն երեւակայական բան մը կը թուէր, բայց այժմ, նկատելով խաղաղական ընդհանուր համաձայնութիւնն ուր յանգած են Եւրոպական ազգերն, Եւրոպիոյ առջեւ տեւական խաղաղութեան այնպիսի յուսալից պատեհականութիւն մի կը ներկայանայ, որ ընդհանուր զէնընկեցութեան մը պէտք է իրապէս առաջնորդէ զմեզ։»

Եթէ պաշտօնական գոյն մ'ընծայենք Նօռի այս հաստատմանն, — և դժուար է չընծայել, — կը տեսնենք թէ գերմանական դիւանագիտութիւնն այնչափ տարիներէ հետէ դէպ յ'որ կէտ նպատակի միտած է Պիզմարք իշխանին առաջնորդութեամբ։ Այդ կէտ նպատակին եղած պէտք է լինի Եւրոպիոյ զինուորական բեռներուն նուազումն, որք ո՛չ միայն կը սպառեն եւրոպական տէրութեանց հարստութեան աղբիւրներն, այլ նաեւ այն աղքատութեան պատճառ են, որ կ'արտադրեն, ամեն Եւրոպական երկրի մէջ ընկերվարական և անիշխանական գաղափարներ յառաջ կը բերեն ու կը զօրացնեն։ Թէ այս զէնընկեցութեան գաղափարն ինչ արդիւնք պիտի ունենայ, դժուար է գուշակել. բայց կրնանք քննել գոնէ թէ գաղափարն իսկ ինչպիսի ձեռնարկներու արդիւնք եղած էր ցարդ։ Անցեալն պատմութենէն ապագայի ողջութեան մասին քիչ մը տեղեկութիւն կրնանք քաղել։ Արդ, յետ հաստատման Գերմանական նոր Կայսրութեան, գերմանական քաղաքագիտութեան առաջին ձեռնարկութիւնն եղաւ ընդհանուր աշխարհի ընդունել տալ Կայսրութիւնն իբրեւ օրինաւորապէս հաստատեալ իշխանութիւն։ Այդ ձեռնարկ ի կատար հանուեցաւ կարգ մը դաշնագրերով, որոց վերջինը Գերմանիոյ և Ռուսիոյ միջեւ կնքուած լինել կը կարծուի։ Երկրորդ ձեռնարկն էր քաղաքականապէս մեկուսացեալ դիրքի մը մէջ ձգել Ֆրանսան, այնպէս որ 1870ի պատերազմին կրկնումը գրեթէ անհնար լինէր։ Թէ արդեօք այս ձեռնարկն ալ նոյնչափ յաջողեցաւ, ճշդիւ չենք գիտեր, որովհետեւ տակաւին պետական գաղտնիք մ'է. բայց երեւոյթներէն դատելով, Պիզմարք իշխանն յաջողած պիտի լինի մեկուսացեալ դիրքի մը մէջ դնել Ֆրանսան։ Երրորդ և վերջին ձեռնարկն էր ընդհանուր համաձայնութիւն մը գոյացնել թէ եւրոպական պետութեանց արդի սահմանները չխանգարին, և ամեն տէրութիւն պահէ իւր ստացած երկիրն։ Հաւանական է թէ գերմանական դիւանագիտութիւնն յաջողած է ձեռք բերել այս արդիւնքն, և հետեւապէս, զինուորական աճման զօրութեան մը պահպանումն աւելորդ կը դառնայ յայտնապէս։ Ասոր ծագում կ'առնու տեսակ մը պաշտօնական զեկուցում թէ եկած է ժամանակն որ Եւրոպա ընդհանուր զէնընկեցութիւն մը կատարէ։ Բայց այդ զեկուցում Ռուսիայէն կու գայ, որովհետեւ եթէ Գերմանիոյ կողմէ գար, կրնար վիրաւորել Ֆրանսայի դիւրազգածութիւնն, և կասկած ներշնչել նմա։ Խորհելով գերմանական դիւանագիտութեան այս ամեն անցեալ ձեռնարկութեանց վրայ, կը թուի թէ յառաջիկայ ձեռնարկն ալ պէտք է լինի համոզել Ֆրանսան որ, միւս տէրութեանց հետ, իւր զինուորական ոյժերը նուազեցնէ, բան մ'որ դիւրին չէ Ֆրանսայի հանրային կարծեաց ներկայ վիճակին մէջ։ Բայց և այնպէս, Ֆրանսայի մէջ իսկ զինուորական ծախուց նուազումն հաճութիւն պիտի պատճառէ ժողովրդեան մեծագոյն մասին, եթէ կարենայ հաստատուիլ թէ Ֆրանսա վախու տեղի չունի արտաքին յարձակումէ մը, և թէ իւր սահմանք պիտի յարգուին։ Այս նպատակաւ, եւրոպական դիւանագիտութիւնն իւր բոլոր նրբամտութիւնն ու ճարտարութիւնը կարի յոյժ օգտակարապէս գործածած կը լինի եթէ հաստատէ տեսակ մը միջազգային երաշխաւորութիւն ֆրանսական երկրին նկատմամբ, որով ֆրանսական կառավարութիւնը բնաւ պատճառ չունենայ իւր զինուորական ոյժերն ու ծախքերը միւս եւրոպական տէրութեանց հետ միահաղոյն զեղչելու և պակսեցնելու։ Այս ամեն նկատողութեամբք, կարեւորութենէ զուրկ չեն Նօռի վերջին հրատարակութիւնները վերաբերմամբ ընդհանուր զէնընկեցութեան խնդրոյն։

### ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիոյ Երեսփոխանական ժողովոյն մէջ կազմուած նոր կուսակցութիւնն, որ «Ազատական Գերման կուսակցութիւն» անունն ստացած է, այս օրերս իւր հիմնագիրն հրատարակեց։ Այս նոր կուսակցութիւն կազմուած է նախկին Յառաջդիմական և Գերմանիայէն բաժանում խնդրող կուսակցութիւններէն, և Խորհրդարանին մէջ առանձին հզօրագոյն կուսակցութիւնը պիտի լինի, քանի որ 110 անդամ պիտի պարունակէ, թէեւ չի կրնար յաղթել եթէ Կղերականք և Պահպանողականք իրենց ոյժերը միացնեն հակառակ կողմն։ Նոր կուսակցութիւնն այնպիսի նպատակներ ունի, որով Պիզմարք իշխանին ուղղակի հակառակորդ պիտի հանդիսանայ։ Նոր կուսակցութիւնը կ'ուզէ պատասխանատու նախարարութիւն մ'՝ սահմանադրական-խորհրդարանական գրութեամբ մը, և մտադիր է պաշտպանել ազգային երեսփոխանութիւնը գործադիր վարչութեան ոտնձգութեանց դէմ, ինչպէս է՝ նմանապէս միանգամայն երկու տարւոյ համար քուէարկելու պահանջումն, զոր պարբերաբար կ'ընէ Պիզմարք իշխան։ Նոր կուսակցութիւնը կը պահանջէ նաեւ ընդհանուր քուէարկութիւն, քուէից գաղտնութիւն, Երեսփոխանաց վճարում, և ազատութիւն մամլոյ, գումարման և ընկերակցութեան։ Իւր հիմնագիրը կը պարունակէ նաեւ՝ զարգացում ազգային բարեկեցութեան ու յառաջխաղացութեան՝ ընկերային ներկայ հիմանց վրայ, ամենայն հաւասարութիւն երաշխաւորելով, գործունէութեան ազատութիւն և ընկերակցութիւններ ու միութիւններ կազմելու ազատութիւն տալով գործաւորական դասուց։ Կուսակցութիւնը պիտի ընդդիմանայ այն կերպ ընկերվարութեան, և այն ամեն տնօրէնութեանց, որք կը միտին սեղմել աշխատութեան և ճարտարագործութեան ազատութիւնն, և որոց մասին ի հարկէ պիտի առնու արդարութիւնն և ազգային ոյժերը։ Կուսակցութիւնը կը պահանջէ որ մաքսերու և տնտեսական կարգադրութեանց մէջ քաղաքական նպաստումներ չմտցուին ի նպաստ մասնաւորաց շահուն, և կը մերժէ ամեն տեսակ մենաշնորհներ և մենավաճառներ. թէեւ կը խնդրէ որ կառավարութիւնն իրապէս հսկէ երկաթուղեաց վերաբերեալ գործոց վրայ։ Բանակի վերաբերմամբ, նորակազմ կուսակցութիւնը կը փափաքի որ զինուորական ծառայութիւնն ընդհանուր լինի, բայց ըստ կարի քիչ տեւէ, և թէ խաղաղութեան ժամանակի զօրաց թիւն ամեն նստաշրջանին որոշուի Խորհրդարանին կողմէ։ Հիմնագիրը կը յայտարարէ ի վերջոյ թէ այս ամեն տնօրէնութեանց նպատակն է ամրապնդել ազգային գերմանական միութիւնն՝ առ Կայսրն և առ Դաշնակցական Սահմանադրութիւնն հաւատարմութեան հիմանց վրայ։

Փառաւոր հիմնագիր արդարեւ, յորում ամեն երկիրներու յառաջդիմական կուսակցութիւնք իրենց բաղձանքները լիապէս ներկայացեալ կրնան տեսնել։

Մարտ 17ին գերմանական նոր կուսակցութիւնն իւր կազմութիւնը տօնեց՝ 800 հրաւիրելոց տրուած հացկերոյթով մը, որոց 400ը Գերմանիոյ ամեն կողմերէն իբրեւ պատուիրակ եկած էին այս կուսակցական միութիւնը կազմելու համար։ Հացկերոյթը շքեղ եղաւ, և եռանդալից ճառեր արտասանուեցան։ Բայց, կ'ըսէ Թայմզին Պերլինի թղթակիցը, Գերման ազգը կը սպասէ տեսնելու բոլոր այս քաղաքական եղբայրակցութեանց գործնական և գրական արդիւնքն, «առանց սակայն մեծամեծ յոյսեր ունենալու»։

—Ռուսական նորընտիր դեսպանն Օրլոֆ իշխան մարտ 21ին Պերլին հասաւ ընկերակցութեամբ Մուրավիեֆ կոմսին։ Հրաժարեալ դեսպան Պ. Սապուրոֆ նոյն օր Կայսեր ներկայանալով իւր հրաժարման գիրը մատոյց։

—Ամսոյս 18ին, Պերլինի 1848ի ապստամբութեան տարեդարձին առթիւ, խուռն բազմութիւն մը դիմեց՝ ապստամբութեան օրը պատնէշներու առջեւ մեռնող անձանց գերեզմանին վրայ, և պսակներ ու կարմիր ծաղկեփնջեր նուիրեց։

—Պերլինի լրագիրք կ'արտատպեն Պեշթէր Ջուռնալի մէկ յօդուածն, որ կ'ամբաստանէ անգլ. բանակը թէ՝ Թամանիէպի ճակատամարտէն յետոյ, ինչպէս Թէլ-էլ-Քէպիրի ճակատամարտէն յետոյ, հրացանի բերանած են գերիներն, և վիրաւորեալներն սպաննած։

—Պերլինի Ռուսական Նախորդ դեսպան Պ. Սապուրոֆ ռուս կառավարութեան 375,000 ֆրանքի ծախած է իւր Թանակրայի պատկերաց նշանաւոր հաւաքածոյն՝ զոր կազմած էր Աթէնքի դեսպան եղած միջոցին։ Իսկ Անգլիա գնած է դեսպանին հաւաքած հնութեանց մնացորդը 625,000 ֆրանքի փոխարէն։ Պ. Սապուրոֆ երեւելի հնագէտ մ'է, որ աւելի կայսերական Միւզէնի մը վերատեսուչ լինելու յարմարութիւն ունի, քան դեսպանական պաշտօններ վարելու։

### ԱՆԳԼԻԱ

Գահիրէէն կը հեռագրեն առ Մ[illegible] թէ անգլիական կառավարութիւնը փափաք յայտնած է Խտիվին որպէս զի յաջող լուծում տայ Սուէզի ջրանցքին ընկերութեան ձեռամբ Իսմայիլիայէն Բոր-Սաիտ անցք ջրի

---

## ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ
40

# ԽԱԶԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

### Ե.

### ԴՈՀԱՐՆԵՐ

Ասլէրի աչքը այն սաստիկ վառված էր դէպի ինձ, որ մի առանձին մտերմութեամբ առեց ղահվէի գաւաթներից մէկը և խնդրեց խմել։ Երբ վերջացրի, խոկոյն մտաբերեցի քաւոր Պետրոսի պատուէրը։ Ի՞նչ պէտք է անել։ Ես մնացել էի շուարած։ Մի մթին, անորոշ զգացմունք ներսից տանջում էր ինձ։ Գուցէ դա հանգած խղճի մի փոքրիկ կայծը լինէր, որ դեռ վառ էր մնացել իմ սրտում։ Երբէք և ոչ մի ժամանակ ես այնպէս կանգ չէի առել եղեռնագործութեան առջեւ, որպէս այդ րոպէում։ Կեանքից զրկել մի անմեղ մարդու, դա սարսափելի չարագործութիւն էր։ Եւ ինչի համար, ի՞նչ էր արել նա։ Բայց մի՞թէ դահիճը իրաւունք ունի քննելու. միթէ իրաւունք ունի խղճալու։ Ես դահիճ էի, ես մի կոյր, անմիտ գործիք էի։ Հրամայում էին մորթել, պէտք է մորթէի...

Ես կանգնեցի։ Ասլէրը տեսնելով, որ մենք մենակ ենք, երախտագէտ սրտով այլ ևս չը համբերեց, նա մօտեցաւ, գրկեց ինձ, և իր կուրծքի վրայ սեղմելով ասաց.

— Ա՛խ, դու ո՛րքան լաւ մարդ ես, շա՛տ լաւ մարդ, Աստուած քեզ բարի տայ։ Եթէ ինձ այդ աղայի մօտ չը բերէիր, ես սովից կը մեռնէի։

— Դարձեալ կը մեռնե՛ս... պատասխանեցի ես, և դանակը ցցվեցաւ նրա կոկորդի մէջ...

Խեղճը դողդողաց և գլորվեցաւ ցած...

Ես ամենայն ճշդութեամբ կատարելով իմ վարպետի պատուէրները, հեռացայ, ինձ հետ տանելով ողորմելի Ասլէրի կարած կաւափը։

Գալով քաւոր Պետրոսի մօտ, հարցրի.

— Ի՞նչ պէտք է անել այդ գլխի հետ։

— Ջարդիր, տուր արջիդ, թող ուտէ։

Ես կատարեցի և նրա վերջին հրամանը։

Քաւոր Պետրոսը այրեց Ասլէրի շորերը, որ հագնելով դուրս էր եկել իր խանութից, և կրկին հագաւ իր արջ պար ածողի մաշտակը։

Միւս առաւօտ նա ուղարկեց ինձ փողոցը տեսնելու, թէ ինչ ձայն կայ։ Դեռ նոր էին ուշադրութիւն դարձրել խանութի կտրած կղպէքի վրայ, դեռ նոր էին գտել մորթված դիակը և դոհարների խորտակված արկղիկը։ Ոստիկանութիւնը շրջապատել էր խանութը, ոչ ոքին չէին թողնում մօտենալ։

— Ի՞նչ է պատահել, հարցնում էին մարդիկ միմեանցից։

— Այս գիշեր խորասանցի հարուստ ակնավաճառի գլուխը կտրել են, բոլոր դոհարները տարել են, լսւում էր պատասխանը։

— Աստուած պատժեց նրան, անփոփոխ միջից լսելի եղաւ մի ձայն, — այս գիշեր նա վաճառեց ինձ քսան հազար րուբլու կեղծ դոհարներ...

Ոստիկանութիւնը իսկոյն կալանաւորեց այդ մարդուն։ Դա երիտասարդ բուխարեցին էր։

Վերադառնալով քաւոր Պետրոսի մօտ, ճանապարհին զանազան մտածութիւններ պաշարել էին ինձ։ Ես հասկանում էի, թէ ինչ նպատակով խաղացվեցաւ այդ ամբողջ դրաման։ Ես հասկանում էի, որ խեղճ Ասլէրին խորասանցի ակնավաճառի հագուստի մէջ մորթել տալով, քաւոր Պետրոսը կամեցաւ կորցնել իսկական ակնավաճառի (այսինքն իր) հետքերը։ Բայց ես չէի հասկանում մի բան։ Իրաւ է, քաւոր Պետրոսը, օգուտ քաղելով երիտասարդ բուխարեցու միամտութիւնից, վաճառեց նրան քսան հազար րուբլու կեղծ դոհարներ։ Բայց ինձ յայտնի էր, որ նա սկզբում ցոյց էր տուել բոլորովին բնական դոհարներ, յետոյ բնականի փոխարէն տուեց կեղծը, արհեստա՛կանը, նմանեցրածը։ Այժմ գլխաւոր հարցը նրանումն էր, թէ որտեղից ունէր քաւոր Պետրոսը այն բնական դոհարները, որ ուրիշ շատ մարդկանց վրայ ևս վաճառեց։

Մի ակնթարթում ծագեց իմ յիշողութեան մէջ վաղուց մոռացված անցքը, որ սկիզբն դրեց իմ դժբախտութեանը... Ես յիշեցի այն աղէտալի բանալին, որ գարբնի աշակերտ եղած ժամանակս շինել էի քաւոր Պետրոսի համար։ Ես յիշեցի նոյն բանալիով մի ամրոցի մէջ պահված երկաթէ արկղի բացվելը և նրա միջից մեծ քանակութեամբ դոհարների և զանազան թանգագին իրեղէնների կողոպտվելը։ Ես յիշեցի վարպետիս կրած տանջանքները, նրա արհեստանոցի յարքունիս գրաւվելը։ — Այդ բոլորը ինձ ասում էին, թէ քաւոր Պետրոսի այժմեան ակնավաճառութիւնը խորին կապ ունէր Պարսկաստանում մի ժամանակ կատարված գողութեան հետ։

Ես յիշեցի մի այլ փաստ, որ բոլորովին հաստատում էր իմ ենթադրութիւնները։ Երբ անցկացանք Երասխ գետից և առաջին անգամ ոտք դրեցինք Ռուսաց հողի վրայ, քաւոր Պետրոսը մաքսատնից փախցնելու նպատակով իր աւանակի փալանի մէջ թագցրեց զանազան իրեղէններ, որ յետոյ ամենայն զգուշութեամբ աշխատում էր ծածկել ինձանից։ — Միթէ այն իրեղէնները այժմեան դոհարները չէին, որ գողացվել էին յիշեալ երկաթէ արկղից, իմ ձեռքով շինված բանալիով։

Երբ այդ մասին փորձեցի տեղեկանալ քաւոր Պետրոսից, նա խիստ խոժոռ հայեացքով նայեց իմ երեսին և լռեց...

Մենք մի քանի օր ևս մնացինք տօնավաճառում, պար ածեցինք մեր արջը և ապա հեռացանք։

### Զ.

### ՌԱԲԲԻ ՇԻՄՈՆԸ

Թողնելով տօնավաճառը, մենք շարունակեցինք մեր արշաւանքը դէպի Կայսրութեան հարաւարեւմտեան գաւառները։ Մի ամսից յետոյ գտնվում էինք *** քաղաքում։ Այստեղ քաւոր Պետրոսը ծանօթացաւ մի հրեայ սեղանաւորի հետ, որը, թանգագին իրեղէններ գրաւ առնելով, փող էր տոկոսով տալիս, ի հարկէ, խիստ ծանր տոկոսով։

Փոքր միջոցում քաւոր Պետրոսը կարողացաւ այնքան գրաւել հրէայի համակրութիւնը, որ նրանց յարաբերութիւնները, կարելի է ասել, բոլորովին բարեկամական էին։ Բայց պէտք չէ մոռանալ, որ քաւոր Պետրոսը իրան ձեւացրել էր նոյնպէս հրեայ, ոչ թէ հասարակ հրեայ, այլ մի գիտնական ռաբբի, որը Թօվրաթը և Թալմուդը անգիր գիտէր։ Դըրա մէջ կասկածել ոչ ոք կարող չէր. որովհետեւ նրա դէմքի գծագրութիւնը բաւական նման էր Իսրայէլի հալածված որդիների տխրամած դէմքին։ Բացի դրանից, նրան ծանօթ էին՝ ոչ միայն եբրայեցոց, այլ զանազան ասիական ազգերի սովորութիւնները ու լեզուները։ Քաւոր Պետրոսը իրան ներկայացրել էր որպէս Սպահանի և Համադանի հրեաների հովիւ։

ՐԱՖՖԻ

(Շարունակելի)

ջրանց մը բանալու խնդիրն ։ Այս ջրբանցի հաստատման նպատակն է ջուր տալ քաղաքին և ջրանցէն անցնող նաւերուն, նաև շրջակայ անապատները բարեբեր ընել ոռոգմամբ ։

—Լոնտոնէն սա տարօրինակ եղելութիւնը կը գրեն Էնդէբէնտանս Պելժ լրագրին ։ Պ. Պրատլըյ Պրեճուօդըր գնացած էր բանախօսութիւն մ'ընելու ։ Ազատախոհ երեսփոխանին թշնամիք այն տեսակ միջոցներու դիմեցին որ յաջողեցան արգիլել զնա խօսք արտասանելէ ։ Ասոնցմէ 20 հոգի մտան սրահին մէջ ուր ատենախօսութիւնք տեղի պիտի ունենար ։ Պ. Պրատլըյ բեմն ելած կը պատրաստուէր խօսիլ, երբ հասած հաւկիթի և փտած պտուղներու կարկուտ մը ինկաւ տեղալ գլխոյն վրայ, և հագուստներն աննկարագրելի պղտորութեան մը մէջ մնացին ։ Նոյնժամայն ֆէնիըըններու ուրիշ խումբ մը հրախաղական փամփուշտներ պայթեցնելով Պ. Պրատլըյի գտնուած բեմին առջև, անոր ձայնը մարել կը ջանար ։ Պ. Պրատլըյ հուսկ ուրեմն պարտաւորեցաւ լռել, և վար իջնել բեմէն ։

—Տըպլինէն կը հեռագրեն թէ անցեալ շաբաթ, Իրլանտայի մէկ քանի քաղաքաց մէջ, պատերու վրայ յայտարարութիւններ տեսնուեր են, սա բառերով «Յաղթական պատերազմ մարդասպանաց դէմ» ։ Ոստիկանութիւնը պատռեց այս յայտարարութիւնները ։

—Էտիմպուրկի համալսարանն իրաւաբանութեան վարդապետի պատուակալ աստիճան տուաւ Պ. տը Լէսէպսի, հրաւիրելով որ գայ անձամբ ընդունել զայս աստիճան՝ Ակադեմական Ծերակոյտին ձեռքէն, յառաջիկայ ապրիլ 17ին, որ Համալսարանին 300րդ տարեդարձի օրն է, և հանդիսապէս պիտի տօնուի ։ Պ. տը Լէսէբս ընդունեց սոյն հրաւէրը ։

—Կարևոր գողութիւն մը տեղի ունեցաւ ի Լոնտոն, Ուինտսորի արքայական հռչակաւոր պալատան մէջ, որ Թագուհւոյն բնակավայրն է ։ Գողերն յաջողեր են Թագուհւոյն քարտուղար Պ. Լօքլինի խուցերը մտնելով արժէքաւոր նիւթեր գողնալ ։ Ասոնց մէջ կը գտնուին բազմաթիւ գոհարեղէնք, որոց ոմանց վրայ կան Թագուհւոյն, իւր հանգուցեալ ամուսնոյն և արքունական ընտանիքի ուրիշ անդամոց պատկերները ։

### ՊԵԼՃԻԱ

Պելճիոյ կառավարութիւնն ալ ընտրական բարենորոգման ծրագիր մը յօրինած է, որ ընտրողութեան իրաւունքը կը տարածէ այն Պելճիացւոց վրայ, որք 18 տարին լրացուցած են, և իրենց մտային մշակութիւնն ապացուցանող պաշտօն մը կը վարեն, կամ վկայագիր մ'ունին ի ձեռին, և կամ կառավարական յատուկ քննիչներու առջև քննութիւն մը կ'անցունեն ։ Պաշտօնական լրագիրն այս օրերս հրատարակեց այն քննութեանց ցուցակն, որոց պիտի ենթարկին 1884 էն մինչև 1888 հինգ տարւոյ միջոցին ամեն անոնք որ ընտրողութեան իրաւունք կ'ուզեն ունենալ, և ուրիշ կերպիւ չեն ստացած զայն ։ Ցուցակը բաւական երկայն է, որովհետև կը պարունակէ 165 խնդիրներ կամ հարցումներ բարոյականի վրայ, 175 խնդիր՝ հաշուի վրայ, 175 խնդիր՝ չափուց և կշռոց օրինական դրութեան վրայ, 176 խնդիր՝ աշխարհագրութեան վրայ, 144 խնդիր՝ Պելճիոյ պատմութեան վրայ, 67 խնդիր՝ սահմանադրական իրաւանց վրայ, և այս հարցմանցն կցուած է 100 ի չափ ուղղագրութեան փորձեր ։

### ՍՊԱՆԻԱ

Սպանիոյ կառավարութիւնն, որ, Եւրոպական մեծ տէրութեանց կարգը մտնելու տենչէն բռնուած, իւր Պերլինի, Վիեննայի, Հռոմի և Բետրբուրկի երկրորդ կարգի դեսպանութիւններն առաջին կարգի դեսպանութեանց բարձրացնել որոշած էր, իւր այս որոշման գործադրումն յապաղել պարտաւորուած է, ելմտական նախարարին յայտարարութեան վրայ թէ Սպանիոյ ելմտական վիճակը չի ներեր դեսպանատանց յաւելեալ ծախուց վրայ կարևոր յաւելում մ'ընել ։

—Նախընթաց օրը ծանուցինք թէ Մադրիտի մէջ զինուորական դաւադրութիւն մը գտնուեր է ։ Նորագոյն տեղեկութեանց համեմատ, խռովութիւնք կը շարունակուին, և ձերբակալութիւններ կը լինին հետզհետէ ։ Յառաջդիմական հանրապետական մասնախմբի քարտուղար Պ. Լա Հօզի տան մէջ ոստիկանութիւնք գտաւ բազմաթիւ նամակներ և թղթեր որք կարևոր տեղեկութիւններ կը պարունակեն յեղափոխական կուսակցութեան գործոց նըկատմամբ ։ Անկարելի է սակայն որոշ տեղեկութիւն մ'ունենալ առ այժմ այն դատավարութեան վիճակին վրայ, վասն զի հարցաքննիչ դատաւորք, պաշտօնին բերմամբ, լռութիւն կը պահէ և չուզեր ո և է տեղեկութիւն հաղորդել լրագրաց ։ Բանտարկելոց արգիլուած է ո և է հաղորդակցութիւն ունենալ ։ Զինուորական իշխանութիւնք խնդրած են որ այդ դատավարութեան մէջ մաս ունեցող քաղաքացիք պատերազմական ատեանի առջև դատուին, բայց հաւանական է որ դատարանն ընդդիմանայ այս պահանջման ։ Երեք լրագիրք խաբանուելով, լրագրապետք դատի ենթարկեցան ։

«Մեր Մադրիտի թղթակցին տեղեկութեանց համեմատ, կը գրէ Թան., այս դէպք աւելի ծանր կերպարանք ունի քան ինչ որ հաւատցնել կ'ուզեն նախարարական թերթերն ։ Ոստիկանութիւնը ցայսօր (18 մարտ) իբր յիսուն անձեր ձերբակալած է, ամենքն ալ զինուորական, որոց մէջ երկու զօրավարք կը գտնուին ։ Անտարակոյս այն զինուորական դաւադրութիւններէ մին է այս, որոց նըմանը շատ տեսած է Սպանիա, և որք բազմիցս յեղափոխութեանց յանգած են, վասն զի կառավարութիւնը չէ կրցած ժամանակին արգիլել ։ »

### ՖՐԱՆՍԱ

Երէկ հեռագիրը ծանոյց թէ Ֆրանսա կորուսած է իւր նշանաւոր պատմագրաց մին, Ֆրանսուա Մինեէ, երիցագոյն անդամ Ֆրանսական Ակադեմիոյ, 88 տարեկան հասակին մէջ ։ Հանգուցեալը շատ վաղուց աշակերտակիցն եղած էր Պ. Թիէրի, որոյ հետ սերտ բարեկամութիւն մը հաստատեց ։ Իւր համբաւը շինեց Ֆրանսական Յեղափոխութեան պատմութեամբ, զոր հրատարակեց 1824ին, և յորում եղելութեանց գեղեցկահիւս նկարագրութեանց մէջ իմաստասիրական եզրակացութիւններ կը հանէր ։ 1830ին Պ. Պ. Թիէրի և Արման Քառէլի օժանդակութեամբ հիմնեց Նասիօնալ լրագիրը ։ Պ. Մինեէ գրեց նաև Մարի Ստուարտ, Ռեֆորմացիոյն պատմութիւնն, Կարոլոս Ե և իւր հրաժարումն, Անթօնիօ Բերէզ և Ֆիլիպպոս Բ, և այլն, և այլն ։ Պ. Մինեէի հետ վերջանալու վրայ է այն նշանաւոր ազատականաց փայլուն փաղանգն, որք դարուս երկրորդ քառորդին մէջ անձնուիրաբար կռուեցան ազատութեան դատին համար ։

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ ծանուցինք, թէ Կիլիկիոյ Տ. Մկրտիչ Կաթողիկոսն հեռագրով գանգատած է առ Բ. Դուռն, թէ Պատրիարքարանը կը բռնադատէ զինքը՝ Էջմիածնի Կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու համար, և թէ՛ Բ. Դուռն ալ Պատրիարքարանի հաղորդելով զայս, բացատրութիւն ուզած է ։ Ի վերջոյ իմացանք, թէ յիշեալ Կաթողիկոսն միանգամայն գանգատած է Սեբաստիոյ Առաջնորդ Գեր. Տ. Պետրոս Սրբազանի համար, ծանուցանելով թէ նա ալ Կիլիկիոյ կաթողիկոսական թեմերն Էջմիածնի թեմերուն հետ կմիացնէ ։

Քաղաքական ժողովն թերևս այս աւուր նստին մէջ կորոշէ պէտք եղած բացատրութիւնը տալ, առանց Եկեղեցական Համագումար ժողովոյ դիմելու ։ Քաղաքական ժողովն անշուշտ Բ. Դրան պիտի մատուցանէ Կիլիկիոյ Տ. Մկրտիչ Կաթողիկոսի ի Պոլիս ստորագրած պայմանագրութիւնն ալ, որով հանդիսաւոր կերպիւ ընդունած է «Ամենայն Հայոց ընդհանրական հայրապետ» ճանչնալ Էջմիածնի կաթողիկոսը, նորա իրաւասութեան ներքև գտնուիլ, յիշատակել Պատարագին մէջ, և հետևաբար հանդերձ թեմօրէնիւք մասնակցիլ Էջմիածնի Կաթողիկոսի ընտրութեան, և Կիլիկիոյ թեմերուն ներկայ սահմանովն շատանալով՝ ընդարձակելու փորձ չփորձել ։

Խնդիր է այժմ, թէ Եկեղեցական Համագումար ժողովն առաջիկայ երկուշաբթի աւուր նստին մէջ ինչպէս պիտի լրացունէ կաթողիկոսական ընտրելեաց եօթնեան ցանկն, քանի որ երկրորդ քուէարկութեան համար գաւառներէն ալ քուէ ուղելու ժամանակ չկայ, և քանի որ՝ առանց գաւառական քուէից կատարուած երկրորդ քուէարկութեան արդիւնքը՝ առաջին քուէարկութեան մնացորդ արդիւնքէն նախամեծար համարիլ արդարութիւն չէ ։ Ուստի հաւանականաբար կկարծուի, որ Եկեղեցական Համագումար ժողովն երկուշաբթի օրը պիտի որոշէ երկրորդ քուէարկութիւն չկատարել, այլ առաջին քուէարկութեամբ առաւելագոյն քուէ ստացող չորս եպիսկոպոսներով լրացունել կաթողիկոսական ընտրելեաց եօթնեան ցանկն ։

Ս. Էջմիածնի Միաբանութեան կողմանէ և Գեր. Սինոդական և Արժ. Միաբան Հայր գլխաւորներուն ստորագրութեամբ հեռագիր մը կը ծանուցանէ, թէ կաթողիկոսական Յանձնաժողովոյ կողմանէ պատրաստուած և յղուած նամակը հասած է յԷջմիածին, և Միաբանութեան կողմանէ նկատողութեան առնուած և լաւ ընդունելութիւն գտած ։ Միաբանութիւնը կը վկայէ իւր մտաց ուղղութիւնը, և պատրաստականութիւն կը յայտնէ ընդդիմութիւն չընելու եթէ Կ. Պոլսոյ Ազգային ժողովն ալ նոյն միաբան ուղղութեամբ իւր քուէներն ամփոփէ ընդհանրապէս բաղձացեալ և արդէն նշանակեալ անձին վրայ ։

Այդ վերջին բառերը կ'ակնարկեն նախընթաց մի նամակի, որով նոյն Սինոդական Հարք յանուն Միաբանութեան յայտնած էին թէ իրենց ընթացքը ոչ այնչափ իրաւանց բծախնդրութեան տեսակէտով էր, որչափ տակաւին անծանօթ ընդհանրապէս անհաճոյ անձ մը Կաթողիկոս ընտրուած տեսնելու կասկածէն, և թէ իրենք կատարելապէս գոհ կըլլինէին եթէ Կ. Պոլսոյ Պատրիարք Ամեն. Տ. Ներսէս Սրբազանը ընտրուէր ի Կաթողիկոսութիւն ։

Վերոյիշեալ հեռագիրը հասած է ճիշդ այն պահուն յորում Եկեղ. Համագումար ժողովը Մայր եկեղեցւոյ մէջ գումարեալ կաթողիկոսական ընտրելեաց ցուցակը պատրաստելու կզբաղէր, և ընդհանուր բաղձանաց և Ս. Էջմիածնայ միաբանութեան ալ տեսութեանց հաւատարիմ թարգման լինելով, իւր քուէից երկու երրորդի մեծամասնութեամբ առաջին ընտրելի կը ցուցնէր զԱմեն. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հայրն ։

Կաթողիկոսական յանձնաժողովն այսօր նիստ կընէ Բերայի Թաղական խորհրդարանին մէջ ։ Կըսեմք, թէ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ալ ներկայ պիտի գտնուի ։

Զմիւռնիոյ Առաջնորդ Գեր. Տ. Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս առաջիկայ շաբթու մէջ կփութայ վերադառնալ ի պաշտօնատեղին, վիճակային կարևոր գործեր ունենալուն համար ։

Ազգային ժողովոյ Մայր-Դիւանն երէկ իւր սովորական մասնակի գումարումն ընելով ի Մատենադարանի Գալաթիոյ, զբաղեցաւ հետևեալ մի քանի խնդիրներով ։

1.— Պէկեան Թ. էֆ.ի երեսփոխանական խնդրոյն առթիւ ժողովոյ կողմանէ իրեն եղած յանձնարարութեան համաձայն՝ 1878–79ի ատենագրութիւններէն քաղուած մ'ըրաւ, և զայն ժողովոյն առաջիկայ նիստին ներկայացնել որոշեց ։

2.— Որոշեց՝ վերջին անգամ Ս. Պատրիարք Հօր և Մայր-Դիւանի կողմանէ ստորագրեալ և առ Ս. Սինոդն յղեալ պաշտօնագրին պատճէնը տալ ի հրատարակութիւն, ինչպէս նաև Կաթողիկոսական ընտրութեան եղանակի առթիւ Ազգ. ժողովոյ կողմանէ առ նորակազմ Կաթող. Յանձնաժողովն յղեալ որոշմնագրին պատճէնը ։

3.— Վերստին նկատողութեան առաւ Ատենագրութեանց տպագրութեան խնդիրն, և որոշեց այս մասին Տնտես. խորհրդոյ հետ ըրած մէկ կարգադրութիւնը ժողովին հաղորդել ։

4.— Որոշեց նախաձեռնութեան նախորդ դիւանէն ուզել այն ամեն պաշտօնաթղթերն, որոց տեղեկագիրերն ցարդ չեն ներկայեալ ժողովին, որպէս զի զայնս յանձնէ նորակազմ դիւանին ։

5.— Նկատողութեան առաւ Մուշէն հասած մի հեռագիր և զայն ժողովին ներկայացնել որոշեց ։

Ազգային ժողովոյ ԻԲ. նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Ուրբաթ, 16 Մարտ, ի Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Գալաթիոյ ։

Ատեանը պիտի բացուի ժամ 7 ին ։

Հրաւիրեալ են Ազգային Երեսփոխանք իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ ։

Մնամ աղօթարար
Ի դիմաց Ս. Պատրիարք Հօր
Փոխանորդ Նորին

13 Մարտ 1884

### ՕՐԱԿԱՐԳ

1. Կանոնական Ծրագիր իրաւասութեան և պաշտաման Կաթողիկոսի ամենայն Հայոց. — Ծրագիր Յիշատակագրի ։
2. Խնդիր ընտրութեան Կաթողիկոսի ամենայն Հայոց ։
3. Յայտարարութիւն Քաղ. Ժողովոյ ի վերայ Ազգային Վարչական վիճակի (գանձակ) ։
4. Տեղեկագիր Համարակալութեան Դիւանի ի վերայ Ազգային Կեդր. Ելմտացոյցի ։
5. Տեղեկագիր Վարչութեան յաղագս ազգային դատագրեանց տպագրութեանց (ի պատասխանի Ն. էֆ. Թիւլպէնտճեանի հարցման) ։
6. Տեղեկագիր Վարչութեան Մայր Աթոռոյ մէջ տեղի ունեցած անցից մասին (ի պատասխանի Ն. էֆ. Թիւլպէնտճեանի հարցման) ։

Ատենադպիր
Յ. ԳՈՒՐԳԷՆ

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Էնկիւրիի նահանգին Մէքթուպճի կարգեցաւ՝ Գոսովայի նախորդ Մէքթուպճի Մուսթաֆա Րէքնէտտին Պէյ ։

Միւթէմայիզի աստիճան տրուեցաւ զինուորական շինութեանց ճարտարապետ Մեծ. Յովհաննէս էֆէնտիի Ազնաւուրեան ։

Թէրճիւմանը Հագիգաթ այս առաւօտ ծանուցած էր թէ, ստուգած է որ Պէյլիկճի պէյի նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովն Յունաց Պատրիարքարանի գործերով չզբաղիր, այլ պաշտօնատանց ոմանց արձանագրութեանց ու տոմարաց կարգադրութեամբ զբաղեալ է ։

Կըսուի թէ վախճանեալ Րիզա փաշայի ժառանգութեանց արձանագրութեան գործին մէջ ներմուծեալ խարդախութիւնն երևան հանելու համար՝ կայսերական հրամանաւ կարգեալ քննիչ յանձնաժողովն ինչ ինչ հետքեր գտեր է ի նպաստ իրաւանց ժառանգորդաց ։

Էնկիւրիի նորընտիր կուսակալ Ազիզ փաշա վաղը կուղևորի ի պաշտօնատեղին ։

Դարպասի գործակատարն երէկ Բ. Դուռն երթալով՝ իւր պաշտօնագիրն մատոյց արտաքին գործոց նախարարին ։

Տփխիսի Օսմանեան նախկին հիւպատոս Էսատ պէյի հաշուոց քննիչ յանձնաժողովն՝ երէկ ալ նիստ ըրաւ ։

Մաքսանոցաց վերատեսուչ Պարթօլէթի էֆէնտի՝ որ երկար ժամանակէ հետէ անկողնոյ կծառայէր, ապաքինելով՝ սկսաւ վարել պաշտօնը ։

Վիլհէլմ Կայսեր ծննդեան 87րդ տարեդարձին առթիւ, Վեհ. Սուլթանը շնորհաւորական հեռագիր մը ուղղեց, որուն Վիլհէլմ Կայսրը նըմանօրինակ հեռագրով մը պատասխանեց, միանգամայն պաշտօն տալով իր դեսպանին որ անձնապէս շնորհակալութիւն յայտնէ Վեհ. Սուլթանին ։

Բօրսէ-Պօստ ելմտական լրագիրը կը կարծէ գիտնալ թէ Րէժիի ընկերութիւնն որոշած է բաժնետոմսերը շրջաբերութեան հանել յառաջիկայ Ապրիլ ամսոյ մէջ ։

Նէօլօգօս կ'ըսէ թէ միտքերն այնչափ գրգռեալ են ի Կրետէ, որ ծանր անպատեհութիւնք կրնան ծագիլ ։ Անցեալ շաբթու Սֆաքիոյ մէջ տեղի ունեցած դէպք մ'ալ կարևորութիւն կրնար առնել եթէ տեղւոյն գայմագամն, որ Սֆաքիացի է, պէտք եղածը փութով ի գործ չդնէր ։ Սֆաքիացիք, թէև Արաբ սերունդէ են, օրթօտոքս կրօնը կը դաւանին և Յոյնարէնի մէկ գաւառաբարբառը կը գործածեն ։ Շատ դիւրագրգիռ են, և ոչինչ պատճառաւ մը ոտքի կ'ելնեն ։ Արդ, տեղւոյն ստորադասեալ պաշտօնէից մէջ կային որք «ուրիշ ցեղի մը կը պատկանէին, » և Սֆաքիացիք այս պահուս զայրացած էին անոնց դէմ ։ Ուստի, Գայմագամին ազդեցութիւնը չյարգելով, այդ ստորադաս պաշտօնէից դէմ սպառնալից դիրք մը բռնեցին, բայց Ն. վսեմութիւն յաջողեցաւ գաղտնապէս նաւ նստեցնել ուրիշ ցեղի մը պատկանող այս պաշտօնակալներն և ղրկել Բալիխորա, Սէլինոյի բերդը ։ Սֆաքիացիք իրենց սրտին նեղութիւնն արտայայտեցին պաշտօնական թղթատարութիւնը կտրելով, և հեռագրաթելը խզելով ։ Իրերն այս վիճակի մէջ էին երբ վերջին թղթաբերք մեկնեցաւ կղզիէն ։

Նէօլօգօս, Կրետէէն եկած նամակներէ քաղելով կը յարէ թէ տեղական վարչութիւնն անկարող կը լինի զսպելու ոճրագործութիւններն որք անձնական վրէժխնդրութեանց արդիւնք են, և այս միջոցիս յաճախակի տեղի կունենան ։ Սպանութիւն մը ուրիշ սպանութեան մը պատճառ կը լինի, և գրգռութիւնն ընդհանուր կը դառնայ ։ Ուստի, կուսակալին ներկայութիւնն ի Կրետէ՝ անհրաժեշտ է ։ Երէկ պիտի սկսէին ընդհանուր ընտրութիւնք Կրետէի երեսփոխանական ժողովոյն համար, և կը վախցուի թէ խաղաղապէս տեղի պիտի չունենան ։

Շքօտրայէն առնուած լրոյ նայելով, տեղական կառավարութիւնը ներում շնորհած է այն Ալպանիացւոց որք յառաջագոյն տեղւոյն զօրանոցին վրայ յարձակած էին ։ Ասիմ փաշա որ այս միջոցիս Պերանա կը գտնուի, առինքն կոչած է Վեհ. Սուլթանին կալուածոց տեսուչն, որ կ'ըսուի թէ մասնաւոր պաշտօնով Դարատաղ պիտի ղրկուի ։

[illegible] կը ծանուցանէ թէ Անգլիոյ Թագուհին բարեհաճած է անգլիական բանակին մէջ վերընդունիլ Պէյքըր փաշան, երկրորդ կարգի [illegible]

[illegible]

Քիոսի մէջ յանձնախումբ մը կարգուած էր կղզւոյն բնակչաց Թեզքերէի Օսմանիէ (Բոքէնտօ) տալու համար ։ Արշիպեղագոսի պաշտօնական լրագիրը կծանուցանէ Քիոսի բնակչաց թէ ո՛վ որ, մարտէն սկսեալ մինչև երեք ամիս չկարենայ իւր Նուֆուզէն ցոյց տալ կառավարական պաշտօնէից, պիտի ձերբակալուի և տուգանաց ենթարկուի ։

Շահզէտէպաշը մեծ շէնք մը պիտի կառուցուի՝ Մահմետական վարժուհեաց վարժապետանոցն հոն փոխադրելու համար ։ Այս դպրոց մօտերս հիմնուած էր, և լաւ արդիւնքներ տուած է արդէն վարժուհիներ արտադրելով թէ՛ նախնական և թէ՛ երկրորդական վարժարանաց համար ։

Սէրքլ տ'Օրիանի ակումբական դէպքը ծանուցինք ։ Ըստ ներքին կանոնագրի քննիչ յանձնաժողով մը կարգուած լինելով, այս յանձնաժողով կիրակի օր նիստ մ'ըրաւ ընդ. նախագահութեամբ Վսեմ. Միւնիր պէյի, և երկարօրէն քննելէ յետոյ Իտալիոյ դեսպանատան քարտուղար Պ. Ֆրանքէտտիի փոխառութեան խնդիրը, միաձայնութեամբ որոշեց ակումբէն արտաքսել զՊ. Ա. Բորբի, և մէկ քուէի առաւելութեամբ որոշեց արտաքսել նաև զՊ. Է. Մավրոկորտատօ, որք քարտուղարին փոխ տուած էին 1,000 ոսկին՝ 15 օրուան համար 400 ոսկի շահով և 80 ոսկի միջնորդչէքով ։

Ռեթիմոյէն (Կրետէ) կը գրեն Աթէնքի Ակրօ լրագրին թէ Ֆոթիատէս փաշայի պաշտօնավարութեան նորոգումը գոհութիւն չէ պատճառած Կրետէի ո՛չ մահմետականաց ո՛չ ալ քրիստոնէից ։

Պ. Ա. Բաբասդրաւօ Բէրամիս հայագէտ յոյն գիտնականն, ամսոյս 27ին ե- [illegible]

[illegible]

## ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

### ԱԺԱՆՍ ՌՕՒԹԷՐ

Պերլին, 24 մարտ

[illegible]

Աթէնք, 25 մարտ

[illegible]

Պերլին, 25 մարտ

[illegible]

Պերլին 25 մարտ

[illegible]

Փեթերսպուրկ 25 մարտ

[illegible]

# ԴՐԱՄԱԿԱՆ

## ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 14 Մարտ.

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Գօնսօլիտէ

| | | |
|---|---|---|
| Երէկ երեկոյ գոցուեցաւ | դհկ. | 9 21 |
| Պօրսային գոցուելէն վերջը | « | 9 21 |
| Երէկ Բերայի մէջ | | 9 21 |
| Առաւօտուն բացուեցաւ | « | 9 19 |
| Բարձրագոյն գին | « | 9 19 |
| Նուազագոյն | « | 9 19 |
| Կէս օրին | « | 9 19 |
| Փոխառութիւն 1863 | Փր. | 58 |
| » 1865 | « | 54 |
| » 1869 | « | 48 |
| » 1873 | « | 43 |
| Պօն տիւ Թրէզօր | Անգլ. լիրա | 17 |
| Ռումէլի երկաթուղի | Փր. | 42 25 |
| Օպլիկասիյօն տը Բրիօրիթէ | » | 375 |

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

| | | |
|---|---|---|
| Ասօսիէթէ Ժէնէրալ | Անգ. ոսկի | 7 15 |
| Քրէտի Ժէնէրալ | Օսմ. լիրա | 4 7 |
| Պանք տը Բօնս | « « | 6 20 |
| Սօս. Շանժ է վալ | « « | 3 35 |
| Թրամուէյ | « « | 2 95 |
| Իւնիւֆիէ. Եգիպտական | | — — |
| Երէկ իրիկուն գոցուեցաւ | | 75 |
| Գիշերը գործ չեղաւ | | — |
| Այս առտու բացուեցաւ | | 74 30 |
| Կէս օրին նոյն գին | | 74 30 |

Ընթացք դրամոց

| | | |
|---|---|---|
| Օսմ. ոսկի | ղր. | 100 — |
| 20 Փրանքնոց | « | 87 25 |
| Անգղ. ոսկի | « | 110 5 |
| Քրիմից | « | 31 1/4 |
| Բօլ Էմփերիալ | « | 90 10 |
| Ռուսայի Թղթադրամ | հատ | 9 |
| Թալէր | « | 19 15 |
| Ֆիօրին | | 9 05 |
| Մէճ. արծ. (տարր.) | « | 108 1/4 |
| Հինգնոց | « | 102 3/4 |
| Մէթալիք | « | 100 1/4 |
| Պղինձ | « | 760 — |
| Թղթադրամ | « | 1500 — |
| Վեցնոց | | 103 |

(ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ)

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լօնտրա 24 Մարտ ժամ 3 վ 15 երեկոյ

| | |
|---|---|
| Անգ. Գօնսօլիտէ գոցուեցաւ | 102 1/16 |
| Օսմ. « բացուեցաւ | 8 9/16 |
| « « գոցուեցաւ | 8 5/8 |
| Օսմ. փոխառութիւն 1865 | 10 5/8 |
| « « 1869 | 9 1/2 |
| « « 1871 | 69 |
| « « 1872 | 16 1/2 |
| « « 1873 | 8 5/8 |
| Փոխառ. 1877 | 80 |
| Պանք Օթօման | 15 7/8 |
| Ռուսական փոխառ. 73 | 90 3/4 |
| Եգիպտ. միացեալ (իւնիֆիէ) | 67 3/8 |
| « առանձն. (բրիվիլէժիէ) | 92 1/8 |
| Տայրա Սանիէ | 66 7/8 |
| Տօմանիալ (փոխառ. Բօչիլտ) | 89 |
| Հունգ. պարտաթուղթ 1877 | 102 |
| Փոխանակ. Բարիզի վրայ | — — |

Վիէննա 24 Մարտ ժ 4 երեկոյ

| | |
|---|---|
| Փոխանակ. Լօնտրայի վրայ | 121 60 |
| Օսմ. Երկաթուղի | 19 80 |

Բարիզ 24 Մարտ ժ. 3 վ. 45 երեկոյ

| | |
|---|---|
| Ֆր. Ռանթ 4 1/2 % բաց | 106 72 1/2 |
| « « 3 % բաց | 75 85 |
| Օսմ. Բօնս. բացուեցաւ | 8 70 |
| « « գոցուեցաւ քրն. կտ. | 8 67 1/2 |
| Օսմ. փոխառութիւն 1863 | — — |
| « « 1865 | — — |
| « « 1869 | — — |
| « « 1873 | 43 — |
| Օսմ. Երկաթուղի | 41 |
| Պանք Օթօման | 650 |
| Գրէտի Լիօնէ | 552 50 |
| « Ֆօնսիէ | 1256 25 |
| Բաժնետոմս Լիօնի | 1241 25 |
| Սուէզի ջրանցք | 2018 75 |
| Ռուսական 5% 1877ի | 96 1/8 |
| Իտալական Ռանթ | 93 80 |
| Արեւ. Ռուս. (Ռիւս Օրիան.) | — |
| Եգիպտական միաց. դոց | 342 50 |
| Սպանիական (արտաքին) | 61 5/8 |
| Հունգարական (ոսկի) | 103 |
| 6 % Հելլենական | — |
| Չէք Լօնտրայի վրայ | 25 23 |

## ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

24 Մարտ ժ. 11 վ. 30 երեկոյ

| | |
|---|---|
| Ֆրանս. Ռանթ 5 1/2 % | 106 30 |
| Օսմ. « | 8 65 |
| « Երկաթուղի | — — |
| Եգիպտական միացեալ | 341 25 |

## ՄԵՏԵՈՐԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Դ. ՏԱՐԱՆ Ի ԲԵՐԱ

26 Մարտ (Ն. Տ.)

| | | ժ. վ. |
|---|---|---|
| Ծագումն արեգական (Աւերւոյթ) | | 5 55 |
| Մուտք « « | | 6 17 |
| Կէս օր (Միջին ժամով) | 12 | 5 36 |
| Կէս օր (ժամ ըստ տաճկաց) | | 5 36 |
| Ծագումն լուսնի (Աւերւոյթ) | Ա | 5 11 |
| Մուտք « « | Ե | 5 36 |

Երեւումն լուսնի. Ծ. Լ. 27 Մարտ.

Առաւօտեան ժամը 8 ին

| | | Հարիւրամետր |
|---|---|---|
| Ծանրաչափ (Ծովու երես) | | 760 5 |
| Ջերմաչափ | | 12. 3 |
| Նուազագոյն աստիճան | | 8. 1 |
| Բարձրագոյն « | իրիկուան | 16. 3 |
| Խոնաւութիւն 0/0 | | 70 |
| Բարձրութիւն անձրեւի 24 ժամու միջոցին | հազարորդամետր | 0, 2 |

Ուղղութիւն հողմոյ, հարաւ. արեւ. յոյժ տկար.

### ՄԱՐՏ 25ԻՆ ՎԻՃԱԿԸ

Հիւսիսային արեւմուտքի և հիւսիսային արեւելքի մէջտեղէն հովը տեղ տեղ ուժգին և բաւական ուժգին կը փչէ Միջերկրականի վրայ. հիւսիսային հովը տկար է Ադրիականի, Արշիպեղագոսի վրայ, յՕտէսա և ի Տրապիզոն։

Բարեխառնութիւնն է 4 աստիճան յՕտէսա, 3 ի Վիէննա, 2 ի Բարիզ եւ 4 ի Բեդրսպուրկ։

# ԵԼՄՏԱԿԱՆ

## ՕՍՄԱՆԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏՔ

Բ.

Մեր նախորդ յօդուածով Օսմ. Ընդհանուր Պարտուց համառօտ մէկ պատմութիւնն ընելով՝ ցոյց տուինք այն հիմնական կարգադրութիւններն, որոց յանգեցան Կայսերական Կառավարութիւնն և արժէտեարց պատուիրակներն։ Դառնանք ուրեմն բացատրելու թէ ո՛յք են այն օգուտներն, զորս ունեցաւ Օսմանեան Տէրութիւնն շնորհիւ այս նոր կարգադրութեանց։

Ինչպէս տեսանք մեր նախորդ յօդուածին մէջ, Տաճկաստան քսան տարւոյ ժամանակամիջոցի մէջ 239,544,866 օսմ. ոսկւոյ պարտք մը ունեցաւ, ուսկից պէտք է հանենք 1854 և 1855ի փոխառութեանց գումարն՝ 8,800,000 օսմ. ոսկի, որովհետեւ այս փոխառութիւնք Անգլիոյ և Ֆրանսայի երաշխաւորութեամբ կնքուած ըլլալով, չեն մտած նոր կարգադրութեանց մէջ և որով վերոյիշեալ պարտուց գումարն կը նուազի 230,744,866 օսմ. ոսկւոյ։

Մեր ընթերցողաց բազումք հարկաւ գիտեն, որ կառավարութիւնք երբ փոխառութիւն մը կ'ընեն հրապարակի վրայ՝ մի և նոյն ատեն յանձն կ'առնուն այդ փոխառութիւնը վճարել որոշեալ պայմանաժամի մը մէջ։ Իւրաքանչիւր տարի ի հաշիւ փոխառութեան դրամագլխոյն վճարեալ գումարը, որ տեղի կ'ունենայ ընդհանրապէս վիճակահանութեամբ (թիրաժ) կը կոչուի գլխավճար (ամօրթիզման)։

Թուրքիոյ Կառավարութիւնն ալ իւր կնքած փոխառութիւններն մի և նոյն պայմանի տակ ըրած ըլլալով, բնական էր որ իւր պարտուց մէկ մասը վճարած ըլլար որ կը հանի 20,915,015 օսմ. ոսկւոյ։ Եթէ զեղչենք այս գլխավճարի գումարն, ի վերեւ նշանակեալ 230,744,866 օսմ. ոսկիէն, կ'ունենանք 209,829,015 օսմ. ոսկւոյ գումար մը։ Ահա այս վերջին գումարն է որ հիմ բռնուած է վերջին կարգադրութեանց։

Կայսերական Կառավարութեան և արժէտեարց պատուիրակներու միջեւ տեղի ունեցած բանակցութեանց առաջին արդիւնքն եղաւ՝ մեր նախորդ յօդուածին մէջ նշանակեալ փոխառութեանց անուանական դրամագլուխներն իրենց հրապարակ եղած գնոյն վերածել, որով վերոյիշեալ 209,829,015 օսմ. ոսկւոյ պարտուց գումարը նուազեցաւ 106,439,606 Օ. ոսկւոյ։ Տարբերութիւնը որ է 103,389,409 օսմ. ոսկի՝, կը ներկայացնէ պարտուց գումարին վրայ եղած նուազումը, հետեւաբար Կայսերական Կառավարութեան բրած շահը։

Յանձնաժողովն պարտուց գումարն այսպէս որոշելէ հետէ հարկ համարեց, ինչպէս որ արդարութիւն էր, ձեռք առնուլ 6 հօկտ. 1875 թուականէն մինչեւ 1881 վերջ անվճար մնացած տոկոսներու խնդիրը։ Այս տոկոսներու գումարն թէեւ 67,984,295 օսմ. ոսկւոյ կը հանէր, բայց նկատելով որ այսպիսի ահագին գումարի մը պարտուց գումարին վրայ յաւելումն անտեղի էր, քանի որ արդէն կէս առ կէս իջած էր այդ պարտքը, Յանձնաժողովն հարկ համարեց 10,375,566 օսմ. ոսկւոյ նուազեցնել տոկոսներու գումարը, որ կը հաւասարի գրեթէ զեղչեալ դրամագլխոյն տասներորդ մասին։ Տարբերութիւնը որ է 57,608,729 օսմ. ոսկի, կը ներկայացնէ տոկոսներու գումարէն Կայսերական Կառավարութեան բրած շահը։

Ամփոփելով ինչ որ ի վերեւ բացատրեցինք, կը տեսնենք որ Տաճկաստանի պարտքն էր՝

| | | |
|---|---|---|
| երբ դրամագլուխ | Լ. Օ. | 209,829,015 |
| տոկոսներէ | » | 67,984,295 |
| գումար | » | 277,813,310 |

Ըստ նոր կարգադրութեան պարտքն է՝

| | | |
|---|---|---|
| երբ դրամագլուխ | Լ. Օ. | 106,439,606 |
| տոկոսներէ | » | 10,375,566 |
| գումար | » | 116,815,172 |

Այս երկու գումարներն իրարմէ զեղչելով՝ գտած 160,998,138 օսմ. ոսկի տարբերութիւննիս կը ներկայացնէ Օսմ. Ընդհ. Պարտուց կարգադրման առթիւ Կայսերական կառավարութեան բրած շահը։

Ինչպէս ամէն ընթերցող կը յիշէ, Բ. Դուռը երբ նուազեցուց կէս առ կէս տոկոսներու վճարումը, կանխիկ չվճարուած տոկոսին փոխարէն Ռուզնամէ անունով առժամեայ արժեթղթեր տրուեցան արժէտեարց։ Այս Ռուզնամէի արժեթղթոց արժէքը որոշուած է ըստ վերջին կարգադրութեանց 265,785 Օսմանեան ոսկւոյ գումար մը, որ եթէ յաւելումք վերոյիշեալ 116 815,172 օսմ. ոսկւոյ գումարին վրայ, կ'ունենանք ընդ ամէնը Լ. Օ. 117,080,957։ Ահա այս է այսօր Օսմանեան կայսրութեան պարտուց ընդհանուր գումարն։

Ինչպէս մեր նախորդ յօդուածին մէջ յիշատակած էինք, տոկոսներու դադարմանէն առաջ Բ. Դրան կողմանէ վճարուած տարեկան տոկոսին գումարն կը հասնէր մինչեւ 12,247,230 Օսմանեան ոսկի, որով՝ համեմատութեամբ այն ատենուան տարեկան հասոյթին՝ կայսերական կառավարութեան կը մնար իբր 11.500 000 Օսմանեան ոսկւոյ գումար մը՝ իւր զինուորական, նաւային, վարչական և այլ ծախուց համար։ Արդ՝ տեսնենք թէ ի՛նչ է այսօր Տաճկաստանի վճարած տոկոսին գումարը։

Ինչպէս վերը տեսանք, մեր պարտուց ընդհանուր գումարն է Լ. Օ. 117,080,957 որոյ հարիւրին մէկը եթէ առնենք, կ'ունենանք Լ. Օ. 1,170,809, որ է տարեկան վճարուած տոկոսին քանակութիւնը. այս գումարին վրայ աւելցնելով առնուազն իւր հինգերորդ մասն այսինքն իբր 235,000 Օսմ. ոսկի, որ կը ներկայացնէ գլխավճարները և երկաթուղւոյ արժեթղթոց վիճակահանութիւնէն եղած թիւերուն համար վճարուած գումարն, կ'ունենանք 1,405,080 Օսմ. ոսկի։

Հարկ է որ հոս մէկ քանի խօսք եւս ըսենք առանձնաշնորհեալ (բրէվիլէժիէ) արժեթղթոց մասին որոց համար կառավարութիւնը կը վճարէ տարին 590,000 ոսկի իբր տոկոս և գլխավճար։ Այս արժեթուղթք անոր համար առանձնաշնորհեալ կը կոչուին, որովհետեւ Օսմ. Ընդհ. պարտուց Վարչութիւնը վերոյիշեալ 1,405,080 օսմ. ոսկին վճարելէ առաջ պարտաւոր է վճարել այս արժեթղթոց տոկոսները։ Այս արժեթուղթք որոց անուանական գումարն է 8,000,000 օսմ. ոսկի, կը ներկայացնեն Ղալաթիոյ դրամատեարց պահանջքը։ Մեր ի վերեւ ըսածներէն կը հետեւի թէ Կայսերական կառավարութեան այսօր վճարած տոկոսին գումարը կը հանի 2,000,000 օսմ. ոսկւոյ, որ եթէ բաղդատենք երբեմն վճարած տոկոսին գումարին հետ, պիտի տեսնուի թէ Կայսերական կառավարութիւնն տոկոսներէն իւրաքանչիւր տարի կը շահի 10,000,000 օսմ. ոսկի։

Տաճկաստանի այսօրուան տարեկան հասոյթն է իբր 13,000,000 Օսմ. ոսկի, յորմէ եթէ հանենք վճարեալ տոկոսին գումարը, այսինքն 2 միլիոն Օսմ. ոսկի, կ'ունենանք 11,000,000 Օսմ. ոսկի՝ յատկանալի կառավարութեան զինուորական, նաւային, վարչական և այլ ծախուց։ Այս կը ցուցնէ որ Տաճկաստան իւր վարչական ծախուց համար գրեթէ միեւնոյն գումարն ունի իւր տրամադրութեան տակ այսօր, ինչ որ ունէր վերջին Ռուսօ-Թուրք պատերազմէն առաջ։

Երբ այսպէս թուեցինք կայսերական կառավարութեան համար եղած օգուտներն, պէտք է յիշատակել նաեւ այն պարագայն թէ շնորհիւ այս կարգադրութեանց Տաճկաստան կրցաւ արգիլելու Միջազգային Յանձնաժողովի մը կազմութիւնը և բարձրացնել իւր դրամական վարկն։

Ուստի եզրակացնելով մեր այս յօդուածը, կը կրկնենք թէ Կայսերական կառավարութիւնը շահեցաւ

1. Ընդհ. պարտուց գումարէն իբր 160,000,000 օսմանեան ոսկի.
2. Տարեկան տոկոսի գումարէն 10,000.000 օսմ. ոսկի, և թէ իւր դրամական վիճակն գրեթէ նոյնն է այսօր ինչ որ էր պատերազմէն առաջ։

Կ. Պ. ՍԸՎԱՃԵԱՆ

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

«ԱՐԵՒԵԼՔ» Ի

## ԸՆԿԵՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԵԿԵՂԵԱՑ

Երիզա, 2/14 մարտ 1884

Երիզայի Ընկերական վարժարանի Հիմնադրութիւն իւր Կ. Պոլսոյ ներկայացուցիչ Զարեհ էֆէնտի Թորոսեանէ գոհութեամբ սրտի իմացաւ թէ՝ Մեծ. Մկրտիչ էֆ. Խաւեան բարեհաճել է երեք օսմ. ոսկի նուիրել իւր կրթարանին։

Այս առթիւ Հիմնադրութիւնս մի ամենաքաղցր պարտ կը համարի ազգօգուտ Օրագրիդ միջոցաւ հրապարակաւ իւր խորին շնորհակալիքը յայտնել ազգասէր Մկրտիչ էֆէնտի Խաւեանի, որ իւր ազգ. նուիրատուութեանց ստուար ցանկին մէջ չէ՝ մոռցել և համեստ բաժին մի արձանագրել Ընկ. վարժարանի, որ հակառակ իւր արդի նիւթական աննախանձելի կացութեան, կոչումն ունի հայրենեաց մի կարեւոր և մարդաշատ գաւառին մէջ հարիւրաւոր աղքատիկ Հայ մանկտւոյն նախակրթարանական դաստիարակութիւն մի տալով իրական ծառայութիւններ մատուցանել կրթական մեծ գործին։

Ժամ է արդ կարծենք այս առթիւ հակիրճ տեսութեամբ գամ մի եւս բերել զԸնկ. վարժարան յուշադրութեան բովանդակ Ազգիս և նորա կարող ու հայրենասէր բարերար ձեռներէն լիայոյս ակնկալել նմանօրինակ օժանդակութիւններ, զոր՝ Հիմնադրութիւնս արժանի կը կարծէ իւր կրթական հաստատութեան՝ ցարդ երկիցս ազգին ընծայած իւր համեստ արդիւնքներով։

Կրթարանս շուրջ վեց տարի յառաջ իւր գոյութիւն գտած լինելով, կը կառավարի այսօր իւր երեք հիմնադիր անդամոց վարչութեամբ։ Արդէն երկու կարգ ընթացաւարտներ, որք թուով քսանի չափ են, ազգին ընծայելու փառացն արժանացած է, նախորդ և անցեալ ամաց յուլիս ամսոց մէջ։ Ընթացաւարտներէն ութն այժմ ուսուցիչ են. վեցն ի քաղաքիս և երկուքն Հայոց Միացեալ Ընկերութեանց պաշտօնեայ են Վասպուրականի և Ռշտունի վարժարանաց մէջ։ Երկուքն ի Կ. Պոլիս բարձրագոյն վարժարանաց մէջ ուսանող են. հինգն գրագիր ազգային պատուաւոր վաճառականաց մօտ, և այլք առեւտրով և արհեստով կ'զբաղին։

Կրթարանիս ուսումնական յայտագիրն մեծ խնամով պատրաստուած՝ ճոխ է այնքան, որքան չեն Պոլսոյ առհասարակ թաղային վարժարանաց յայտագրերն։ Աւանդելի առարկայք են բաց ի նախակրթարանաց սովորական ուսումներէն և լեզուագիտութենէ (հայերէն, թուրքերէն և ֆրանսերէն) բնագիտութիւն, մարդակազմութիւն, համրահաշիւ, տոմարակալութիւն, գծագրութիւն, հայկական ձայնագրութիւն, մարմնամարզ եւն.։

Գալով կրթարանիս նիւթական վիճակին, ի սկզբան անդ բացման իւրոյ և յաջորդաբար 2-3 տարի էր լաւագոյն իւր մի քանի բացառիկ հասութից աղբիւրներով, որք այժմ դոքմէս խափանւ ցամաքել են։ Սոքա էին 1. Միաբանից լսարանք, 2. Տեղական հանդիսականութիւնք և կտակք, 3. Երբեմնակի նուիրատուութիւնք այցելու առատաձեռն ազգայնոց և 4. Որդեգրութիւնք ի Կարին, ի Տրապիզոն և այլուր։ Անմ՝ հետէ լսարանք դադարեալ են. տեղական նպաստք՝ առեւտրական անձկութեանց պատճառաւ մեծաւ մասամբ սպառեալ են. արտաքին որդեգրութիւնք վերջացած՝ սանուց ընթացաւարտութեամբ, իսկ նուիրատուութիւնք այցելուաց դուռն ուրեք կը պատահին այժմ։

Նա այսպէս կրթարանիս նիւթականն՝ ամ ըստ ամէ խոտորնակ հակամիտութիւն գտաւ իւր բարոյականին, որոյ ըստ աճելն և նուազեցան հասոյթք, հակառակ այն բազմապատիկ ծախուց, որք արդիւնք էին տակաւ զարգացման հաստատութեանս։ Իրաց այս ձախող կացութեան բնական հետեւանքն եղաւ այս վերջին մի քանի ամաց թողած աւելի քան 100 ոսկւոյ բացն, որ կը ծանրանայ այժմ հիմնադրութեանս վերայ և որ համեմատաբար մեր կարի սահմանափակ կարողութեան՝ յոյժ ծանր լինելով, դրաւ կրթարանս արտաքին ձեռնտուութեանց կարօտ լինելոյ անհրաժեշտ հարկին ներքեւ։

Ուստի այս առթիւ հրապարակաւ հրաւէր կը կարդանք ազգասիրութեան և ուսումնասիրութեան ազգիս կարող մեծատանց, որք ի Պոլիս, ի Զմիւռնի, ի Գահիրէ և ի Ռուսահայս, աջակցելու մեզ և քաջալերելու հաստատութիւն մի, որ ըստ վկայութեան բազմաթիւ ականատես այցելուաց, կարող է մեծամեծ ծառայութիւններ մատուցանելու Ազգին։ Նուիրատու ազգայինք կարող են իրենց նուէրներն յանձնել կամ մեր Կ. Պոլսոյ ներկայացուցիչ Զարեհ էֆէնտի Թորոսեանի և կամ ուղղակի յղել առ մեզ, որք պարբերաբար կը հրատարակուին ազգային թերթերու մէջ։

Աստ ամենախորին երախտագիտութեամբ կը յիշենք՝ որպէս առաջինն ի շարս Բարերարաց Ընկերութեան վարժարանի զՊատուական անուն Բարձրաշնորհ Տ. Տ. Ներսէս ազգասէր և ուսումնասէր Սրբազան Պատրիարք Հօր, որոյ հայրական քաջոզ խնամատարութիւնը և բարձր հովանաւորութիւնը լիաբուռն վայելեց և կը վայելէ կրթարանս։ Նոյն երախտապարտ զգացումներն ջերմապէս ունինք և առ Պատ. Անդամս Հայոց Միացեալ ընկերութեանց, Սովելոց Յանձնաժողովոյ և Բարեգործական Ընկերութեան, որք բացառիկ պայմաններով ի շարս անդ. բարերարաց վարժարանիս զերկրորդ տեղին գրաւած ունին։

Մեծաւ բերկրութեամբ կարդացինք զփրկելի անունս Մեծ. Տեառց Սերովբէ էֆ. Կիւլպէնկեանի և Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի, որք յօժարակամ խոստացել են ընծայել վարժարանիս և որոց այժմէն պարտիւ ունինք մեր շնորհապարտութիւնը յայտնելու։ Բիւր շնորհակալիք և Մեծ. Յ. Թորոսեան և Պ. Վ. Մալեան ազնուասիրտ Տեառց և ազգային ամեն եռանդուն գործիչներու և ամեն անոնց որք ո և է առթիւ ազնուասրտութեամբ նիւթական ու բարոյական մեծամեծ անկշռելի բարիք ընծայած են և կ'ընծայեն մեզ։

Ի դիմաց Հիմնադրութեան

ՄԿՐՏԻՉ ԴԱՆԻԷԼԵԱՆ Յ. ՇԱՒԱՐՇ

---

Բէնկա, 1884 փետր. 27

Բէնկա գիւղն այս տարի եւս յոյժ հանդիսաւոր կերպով տօնեց Սրբոց Վարդանանց տարեդարձը։

Առաւօտեան եկեղեցական հանդէսը փառաւորապէս աւարտելէն յետոյ, ժամ 5½ին սկսաւ դպրոցական հանդէսը, Ս. Եկեղեցւոյ մէջ։ Ի ձայն զանգակին հետզհետէ խուռն բազմութիւն արանց եւ կանանց լցուեցաւ եկեղեցին. երբ արժանապատիւ քահանայք զգեստաւորեալք առաջնորդութեամբ սանուց դպրոցին եւ երգեցիկ մանկանց կը մտնէին յեկեղեցի, սանուհիք եւս՝ որ արդէն յեկեղեցին համախմբեալ էին, փութային ներդաշնակ երգերով ողջունել հանդիսաւոր մուտն պաշտօնական մարմնոյն։ Բոլոր հանդիսականաց սիրտն կը բաբախէր այս գեղեցիկ տեսարանին և սրտառուչ երգոց վրայ։

Հանդէսը բացաւ վարժարանիս վերատեսուչ Մեծ. Կարապետ էֆ. Տէր Յակոբեան ազդու ատենաբանութեամբ մը, որ Սրբոց Վարդանանց քաջաց յիշատակին առթիւ բանելով, վարժարանիս արդի բարեկարգ վիճակն յայտնեց, և գիւղին պատուարժան պաշտօնական մարմնոյն եւ յառաջդիմասէր Հայ ժողովրդեան հոգածութեան և համակրանաց համար մասնաւոր շնորհակալիք մատոյց, եւ իբրեւ շօշափելի ապացոյց ներկայեց թէ Վարդանանց հանդիսի առթիւ սովորաբար յանուն Սանուց ընկերութեան հրատարակուած պնակի արդիւնքն, հակառակ նախընթաց տարւոյ 860 ղրուշի արդեանց՝ այս տարի եղած է 1000 ղրուշ գիւղի մէջ միայն. իսկ ի Պոլիս պանդխտող հայրենակից եղբարք չը մոռնալով իրենց սրբազան պարտքը, եւ փափաքելով գէթ հեռուէն մասնակցիլ այս աւուր փառաւոր հանդէսին, որ յառաջ փութացեր են իրենց մէջ հանգանակութիւն բանալ, Մեծ. Աղէքսանդր էֆ. Տ. Յակոբեանի և Մեծ. Կարապետ էֆ. Մեծատուրեանի մասնաւոր ջանիւք, և ուրիշ կրթասէր անձանցմէ եւս հանգանակելով, 1130 ղրուշի գումար մը գոյացուցած են. որով Սանուց ընկերութեան այս տարուան պնակի բովանդակ հասոյթն եղած է 2130 ղրուշ։ Մեծ. վերատեսուչ էֆէնտին խօսքը վերջացուց խոստանալով շարունակել իւր աշխատութիւնն վասն յառաջդիմութեան սանուց և սանուհեաց Բէնկա գիւղի, փառաւորութիւն ունենալով գիւղին Հայ ժողովրդեան համակրանաց և քաջալերութեան վրայ։

Այս ատենաբանութիւնը մեծ ազդեցութիւն ըրաւ հանդիսականաց վրայ, և բուռն ծափահարութեամբ և ջերմ շնորհակալութեամբ ընդունուեցաւ։

Յետոյ սանուց և սանուհեաց կողմանէ գողտրիկ տրամախօսութիւններ լսուեցան, որք քանիցս ծափահարուեցան։ Հետզհետէ ատենախօսեցին վարժարանի աշակերտներէն մին, աշակերտուհիներէն մին, նախկին աշակերտներէն և Կիրասոնի այժմեան դասատու Պ. Մկրտիչ Պարսամեան, օգնական անձնուէր դասատու և Սանուց ընկերութեան Ատենապետ Պ. Նշան Գօնչէկիւլեան՝ որ Սանուց ընկերութեան օգտակարութիւնը բացատրելով յանուն ընկերութեան շնորհակալութիւն յայտնեց Հայ հասարակութեան և ի Պոլիս պանդխտող Մեծ. հայրենակցաց, եւ ի մասնաւորի վարժարանիս վերատեսուչ Տէր Յակոբեան Մեծ. Կարապետ էֆէնտիի, որ ինչպէս վարժարանիս համար անձնուէր աշխատութիւն՝ նոյնպէս և Սանուց ընկերութեան համար յատուկ հոգածութիւն և խնամք չի խնայեր։ Յետոյ վարժարանին հայկական դասատու Դաւիթ էֆ. Փէշտիմալճեան Սրբոց Վարդանանց վրայ սրտաշարժ և ազդու բանախօսութիւն մ'ըրաւ, կրթութեան սիրոյն եւս բացատրելով։ Այս ամեն ատենախօսութիւնք խորին տպաւորութիւն յառաջ բերին հանդիսականաց վրայ, և անընդհատ ծափահարուեցան։

Ի վերջոյ Զմիւռնացի Մեծ. Խաչիկ էֆ. Պօղոսեան ուսումնական երիտասարդը ատենախօսեց, և մասնաւորաբար ներբողեց Բէնկայի վարժարանաց յառաջդիմական վիճակը, ըսելով թէ «Բէնկայի վարժարանը նախանձելի դիրք մ'ունի իւր շրջակայից բաղդատմամբ». և այս մասին իւր բերկրանքն ու շնորհակալութիւնն յայտնեց բոլոր հանդիսականաց, յատկապէս Տէր Յակոբեան էֆէնտիի և պատուարժան ուսուցչական մարմնոյ, և քաջալերելով զաշակերտս և զաշակերտուհիս կնքեց խօսքը։

Հուսկ ապա հանդիսին նախագահ Արժ. Տ. Յակոբ Հայր Թաթարեան սկսաւ խօսիլ, և Մեր Օգոստափառ Վեհապետին Սուլթան Ապտ-իւլ-Համիտ կայսեր թանկագին կենաց համար ջերմ բարեմաղթութիւններ ըրաւ, շնորհակալութիւն յայտնեց Տեսչութեան և համայն դպրոցականաց, ու փակեց հանդէսը, որ գրեթէ չորս ժամ տեւած էր։

Հանդիսականք գոհ և զուարթ մեկնեցան։

# ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ելէկտրականութեամբ լուսաւորուած կառք։ —Փարիզի մէջ, Հասարակապետութեան նախագահին տուած պարահանդէսին գլխաւոր մեծ ուշադրութիւն գրաւեց կառք մի որ դիցաբանական երեւոյթ մը կ'ընծայէր իւր քառեակ հնոցներով։ Սիէմէնսի դրութեամբ 4 ելեկտրականթեղեր դրուած էին լապտերներուն մէջ և ձիերու ճակատը։ Բիլէրը արկղի մը մէջ կառքին տակը զետեղուած էին։ Սակայն ցաւ յայտնեցին թէ ինչո՞ւ համար պալատը նոյն դրութեամբ լուսաւորուած չէր, վասն զի մոմերուն պատճառաւ շատ հրաւիրելոց զգեստները աղտոտեցան և անխորժ էր տեսնել կանթեղակալներու եւ էջը սանդուխներու վրայ ծխող միացորդները փոխելու համար։

Աշխարհագրական։ —Ֆրանսայի գիտնականութեանց ակադեմիային յունուար 7 ի նիստին մէջ Մարսիալ հրամանատարը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ վերաբերեալ յՆերկիր Հրոյ եղած նաւային արշաւանքին, որոյ գլխաւոր էր ինքն։ Այն արշաւանքը Ամերիկայի հարաւային ծայրը ներկայացնող քարտէզները պիտի փոփոխէ. Նոր ծանօթութիւններ կուտայ Մակելլանի արշիպեղագոսին վրայ, Զոյգ կղզեաց արեւմտեան եզերքը կ'որոշէ, որ մինչեւ ցարդ գծուած չէր, Ռօլլսդոնի կղզին որ մէկ կղզի մ'էր յայտնեց երեք կղզիներու փոխուած է։ Այս հետազօտութիւնք պիտի յանգին ապացուցանելու թէ վերոյիշեալ կղզեաց երկրաբանական կազմութիւնը Զօրնի հրուանդանին նման է։ —Պ. Էլիզէ Ռըքլիւ հռչակաւոր Ֆրանսացի աշխարհագիրը որ հոյակապ ձեռնարկութիւն մը ըրած է իւր տիեզերական աշխարհագրութիւնը հրատարակելով, Առաջաւոր Ասիոյ կ'անուանէ այն մասը որ կը բովանդակէ Աֆղանիստան, Պէլուճիստան, Պարսկաստան, Ասիական Թուրքիա, և իւր պարունակած կարեւոր մէկ երկիրը, Տիգրիսի և Եփրատայ ջրերը, Արաբիա, փոքր Ասիա, Ասորեստան և Պաղեստին։ Ծանօթ է արդէն թէ Պ. Ռըքլիւ ինչ խնամքով կը նկարագրէ այլ և այլ երկիրները, իրենց հողերուն, կլիմաներուն, ջրոյ ընթացքներուն, բոյսերուն, կենդանեաց, ժողովրդոց ցեղերուն, հաստատութեանց բարուց, կրօնից, երկրագործութեան, և վաճառականութեան տեղեկութիւններով։ Տեղեկութիւնք ճշգրիտ են և ոճը բարձր և ազնիւ։

Մարդաբանական։ —Տոք. Մոնդանօ Փիլիպեան կղզիները այցելած է, և մարդաբանական տեղեկագիր մը կը մատուցանէ Մարդաբանական ընկերութեան յունուար 17ի նիստին մէջ։ Պ. Մոնդանօ՝ 160 անձանց վրայ առած չափերէ եւ բաղդատութիւն պատկերէ եւ կմախքներէ զորս իւր հետ բերած է, կը հետեւցնէ թէ վերոյիշեալ բնակիչները կը վերաբերին Հնդկական և Մալէզեան կղզեաց. երրորդ տարր մ'ալ խառնուած է որ է Չինական ցեղը։ Դրացի կղզիներուն բնակելոց արեան մէջ մեծ մաս ունի արաբական արիւնը։

Ատամնաբուժական։ —Ժընեւրացի ատամնաբոյժ մը հնարած է միջոց մը առանց ցաւի ակռայ հանելու։ Պ. Բօլ Պէր զայն յանձնառու եղած է ծանուցանել Կենսաբանական ընկերութեան։ Կ'առնուն ձգական խէժէ փոքրիկ քառակուսի մը կեդրոնը ծակ, զայն կ'անցնեն ակռային վրայ և կը մղեն արմատին մինչեւ վերին մասը լինդը ճնշելով։ Ձգախէժը կը կծկուի ջերմութեան ազդեցութեամբ, նախ արմատը կը սասանէ և չորս կամ հինգ օրուան մէջ ակռան բոլորովին կը հանէ առանց ցաւի։ Հանճարեղ գաղափար մ'է, թերեւս կարելի ըլլայ օգուտ քաղել։ Տոք. Կալիք կը յիշէ թէ երիտասարդ աղջկան մը երկու հատանող ակռաները որք չափազանց հեռու էին ի միմեանց, մօտեցընելու համար ձգախէժի կտորներ դրած էին։ Խեղճ աղջիկը ակռաները կորսնցուցեր է, վասն զի չէին մտածեր ձգախէժի կտորները հանել։

Ռազմագիտական։ —Մարդ սպաննելու արուեստը աւելի արագ կը զարգանայ քան զայն բժշկելու արհեստը։ Նիւ Եօրքի մօտ պիտի փորձեն թնդանօթ մը որ 28 լիպրա վառօդով կը լեցուի։ Գործիքին մէջ երկու տեղ կայ որոց մէջ ալ 28 ական լիպրա վառօդ կը դրուի։ Առաջինը ռումբը պիտի արձակէ, իսկ վերջինները նորա արագութիւնը պիտի սաստկացնեն։ Կը հաշուի թէ ռումբը պիտի կրնայ ծակել 15 մղոն հեռաւորութեամբ երկու ոտք թանձրութիւն ունեցող թիթեղներ։

Յառաջիկայ սեպտեմբեր 2ին Ֆիլատելֆիոյ մէջ ելեկտրականութեան արուեստահանդէս մը պիտի բացուի։

Բանամայի ջրանցք։ —Բանամայի ջրանցքին աշխատութիւնք սկսած են, 80,000,000 խորանարդ մետր հող կայ բառնալու եւ արդէն 3,600,000 հանած են։ Այնպիսի մեքենաներ ունին որք 10 ժամուան մէջ 50,000 խորանարդ մետր հող կը հանեն որով կը հաշուեն թէ 1888ին գործը պիտի լրանայ։

Գործաւորաց թիւն է 15,000, Ճամայքացի։ Իւրաքանչիւրն կ'ընդունի 5 ֆր. օրական, և կ'երեւի թէ մէկ ֆրանք միայն բաւական է իւր ծախուց։ Դժբաղդաբար առողջապահական վիճակը գոհացուցիչ չէ, ժանտատենդը երեւան եկած է եւ ճարտարապետաց գլխաւորին երկու զաւակները արդէն զոհ գնացած են։

Փարիզի դիտարանը։ —Աղերսագիր մի մատուցուած է Ֆրանսայի հասարակաց կրթութեան պաշտօնէին Փարիզի աստղաբաշխական դիտարանը քաղաքէն դուրս հանելու համար. Փարիզի լոյսը, աղմուկը և փողոցներու մէջ կառքերու պատճառած դղրդիւնը արգելք կ'ըլլան աշխատութեանց։ Այժմեան շէնքերը պիտի վերածուին աստղաբաշխական թանգարանի։

## ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏ ՄԸ

Հին ձեռագիրները ու աղտոտ գիրքերը մաքրելու միակ միջոց մը։ Առ գաւաթ մը ժաւէլ ջուր. փոքր վրձինի մը միջոցաւ սրսկէ այդ ջուրը բծերուն վրայ։ Յետոյ կակուղ ֆլանէլայով մը չորցո՛ւր մինչեւ որ թղթին խոնաւութիւնը անցնի։ Սոյն եղանակաւ մի քանի ժամ վերջը այդ աղտեղի ձեռագիրները իրենց առաջին վիճակը կը վերստանան։

# ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՊՈԼՍՈՅ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ 3—11 ՄԱՐՏ

**ՑՈՐԵՆ.**— Այս շաբթու այս ապրանքին վրայ գործ չեղաւ եւ գիները անփոփոխ են։ Հասաւ 5,000 գրիւ կակուղ ցորեն եւ 3,000 կարծր։ Վաճառեցաւ 15,000 գրիւ Ռումէլիի կակուղ ցորեն եւ 3,000 գրիւ կարծր։ Պատրաստ 20,000 գրիւ։

**ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ.**— Հրապարակը միշտ լաւ վիճակի մէջ․ գիները լաւ բռնուած են։ Այս շաբթու քիչ մը բան վաճառեցաւ ի գին 13 5/8 ղրշ․ 59 լիպրանոց նոր գրիւը։

**ԳԱՐԻ.**— Տեղական սպառման համար վաճառումներ եղան 10,000 գրիւի չափ ի գին 11 3/4—12 երկրորդ տեսակաց համար, իսկ 12 1/2 առաջին տեսակաց համար։ Գիները լաւ բռնուած են եւ հրապարակին վրայ բաւական վաճառողք կը գտնուին։ Պատրաստ 20,000 գրիւ։

**ՋԱՎՏԱՐ.**— Այս շաբթու քիչ մը բան վաճառեցաւ ի գին 12 ղրշ․ եւ 8 փարայի հին գրիւը։ Հրապարակին վրայ վաճառողք կը գտնուին․ գիները լաւ բռնուած են։

**ԼՈՒԲԻԱ.**—Տեղական սպառման համար բաւական վաճառումներ եղան Դանուբի ի գին 140–145 ղրշ․ 100 օխան․ Թրանզիթով քիչ մը բան վաճառեցաւ Մարսիլիայի համար Օրտուի տեսակէն ի գին 122 ղրշ․ էն գրիւը։ Հրապարակը հանդարտ է եւ գիները լաւ բռնուած։

**ԲԱԿԼԱ.**— Հրապարակը հանդարտ է․ այս շաբթու վաճառումներ չեղաւ։ գիները անփոփոխ։

**ՍԻՍԵՌՆ.**— Այս շաբթու հրապարակը հանդարտ է, կարեւոր վաճառումներ մը չեղաւ եւ գիները շատ տկար կերպով բռնուած են։

**ՔԹԱՆԱՀՈՒՆՏ.**— Տեղական սպառման համար վաճառեցաւ 60 փարայէն օխան․ Թրանզիթով նշանակուելու գործ չկայ։

**ՍՈՒՍԱՄ.**— Այս շաբթու մաս մը վաճառեցաւ Թրանզիթով․ Մուտանեայի ապրանք ի գին 100 փարայէն, իսկ Պալը-քէսէրի 96 փրյ եւ Ատանայի 100 փարայէն հրապարակը հանդարտ եւ գիները տկար կերպով բռնուած են։

**ՔԱՆԱՐԵԱ ԵԷՄԻ.**— Հրապարակը հանդարտ է։ Օտար երկիրներու համար վաճառումներ մը եղաւ 6000 գրիւի չափ, ի գին 58 1/2 փարայէն։

**ՔԷՆՏԻՐԻ ՀՈՒՆՏ.**— Հրապարակին վրայ շատ վաճառողք կը գտնուին բայց պատրաստ շատ քիչ կայ։

**ԱՖԻՈՆԻ ՀՈՒՆՏ.**— Հրապարակը հանդարտ է, եւ գիները շատ տկար։

### ԱԼԻՒՐ

Հրապարակը բաւական բանուկ է եւ գիները լաւ բռնուած ապրանքին նուազութեանը պատճառաւ։ Այս շաբթու վաճառեցաւ 16,000 պարկի չափ։ Պատրաստ 60,000 պարկ, որոց 10,000 պարկ Օտեսա, 10,000 Պրայլա, եւ 40,000 Ռումէլիի եւ տեղական։

### ԳԱՂԹԱԲԵՐՔ

**ՇԱՔԱՐ.**— Հասաւ 3,720 պարկ։ Վաճառեցաւ 3,220 պարկ։ Պատրաստ 3,000։ Հրապարակը բաւական բանուկ է, բայց գիները տկար։

**ԽԱՀՈՒԷ.**— Հասաւ 1000 պարկ։ Վաճառեցաւ ոչինչ։ Պատրաստ 7000 պարկ։ Հրապարակը շատ գէշ վիճակի մէջ է, եթէ այսպէս շարունակուի, գիներուն վրայ մեծ անկում կը յուսացուի։

**ԲՐԻՆՁ.**— Հասաւ այս շաբթու 2,500 պարկ Անգղիական։ Վաճառեցաւ 1,500 պարկ Անգլիական։ Պատրաստ 6,000 պարկ Անգլիական եւ 1,500 Իտալական։ Հրապարակը հանդարտ է, գիները իջնալու վրայ են։

**ՄՈՄ.**— Հասաւ 2,000 սնտուկ։ Վաճառեցաւ 1.000 սնտուկ։ Պատրաստ 1,000 սընտուկ։ Հրապարակը լաւ բռնուած է։ Եկած ապրանքներէն մաս մը վաճառեցաւ քիլօն 8 ղրշ ի։

**ՔԱՐԻՒՂ.**— Հասաւ 10,000։ Վաճառեցաւ 2,000 սնտուկ Ամերիկեան եւ 400 տակառ եւ 200 սնտուկ Ռուսիոյ։ Պատրաստ 50,000 սնտուկ եւ 1800 վարել Ռուսական։ Այս շաբթու հրապարակին վրայ բաւական գործ եղաւ։ Բայց գիները անկման ենթակայ։

**ԱՊԱԿԻ.**— Հասաւ 1,500 սնտուկ։ Վաճառեցաւ 500 սնտուկ։ Պատրաստ 9,200 սընտուկ։ Հրապարակը հանդարտ է, գիները տկար։

**ՊՂՊԵՂ.**— Հաստատ բռնուած է։

### ՈԳԻ

**ԱԼՔՈԼ.**— Այս շաբթու կարեւոր գործ մը չեղաւ եւ գիները անփոփոխ են։ Հասաւ 25 տակառ․ վաճառեցաւ 95 տակառ․ Պատրաստ 150 տակառք։

**ՌՕՄ.**— Հրապարակը շատ հանդարտ է եւ գները անկման վրայ են, գործ չըլլալուն պատճառաւ։ Հասաւ 35 տակառակ Անգլիական։ Վաճառեցաւ 80 տակառակ։ Պատրաստ 200 տակառակ։

### ՄԵՏԱՂՔ

**ԵՐԿԱԹ.**— Հրապարակը շատ լաւ վիճակի մէջ է այս շաբթու եւ բաւական գործեր եղան։ Հասաւ 100 թօնօ։ Վաճառեցաւ 200 թօնօ։

**ԱՆԱԳ.**— Հասաւ 40 տակառակ։ Վաճառեցաւ 20 տակառակ։ Պատրաստ 320 տակառակ։ Հրապարակը հանդարտ է, գիները անփոփոխ։

**ՁԵԼԻԿ.**— Հասաւ 3000 սնտուկ ։Վաճառեցաւ 100 սնտուկ։ Պատրաստ 2,900 սնտուկ։ Հրապարակը հանդարտ․ գիները անփոփոխ։

**ԳԱՐՖԻՑԱ.**— Հասաւ 2,000 տակառակ։ Վաճառեցաւ 1,000 տակառակ։ Պատրաստ 29,000 տակառակ։ Հրապարակը հանդարտ գիները անփոփոխ։

**ԹԷՆԵՔԷ.**— Հասաւ 450 սնտուկ։ Վաճառեցաւ ոչինչ։ Պատրաստ 950 սնտուկ։ Պահանջը աննշան է, եւ գիները անկման ենթակայ։

**ՃԻՆԿՕ.**— Հասաւ 150 տակառակ։ Վաճառեցաւ 50 տակառակ։ Պատրաստ 9,500 տակառակ։ Հրապարակը հանդարտ, գիները միայուն, եւ վաճառողք շատ քիչ։

### ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱ

Այս շաբթու բաւական գործեր եղան մանր վաճառումներով։ Ասիոյ եւ Ռումէլիի համար նշանակուելիք գործեր չեղան։

**ՄԱՀՈՒՏԻ.**— Այս շաբթու Պարսկաստանի համար մեծ գործեր եղան 310 պալէայի չափ վաճառեցաւ Հօյլ ապրանքէն ի գին 39 ղրշէն կարը։

**ԼՈՆԿ ԳԼՕԹ.**— Նշանակուելիք ոչինչ կայ այս ապրանքին վրայ։

**ԵԷԼՔԷՆ ՊԷԶԻ.**— Լաւ գիներով վաճառումներ կ'ըլլան մեծ քանակութեամբ։

**ԽԱՄ ՊԷԶ.**— Նշանակուելու արժանի վաճառումներ չեղան այս շաբթու։

**ԹԷՆԶԻՖ.**— Այս շաբթու մեծ մաս մը ծախուեցաւ․ Նօ. 16ին գին 39 Նօ. 4․ 43 ղրշ․ գիները լաւ բռնուած են։

**ՊԱՍՄԱ.**— Շաբթուս բաւական վաճառումներ եղան Ռումէլիի համար․ փնտռուեցան գլխաւորաբար ճերմակի վրայ նոր տեսակներ, կարմիր, կանաչ, կենդանի մանիշակագոյն եւ ուրիշ կարմիր կտաւներ։

### ՀԱՆՔԱԾՈՒԽ

Այս շաբթու նշանակուելիք գործ մը չեղաւ, գիները անփոփոխ են եւ հրապարակը հանդարտ։ Հասաւ 900 թօնօ Սկովտիոյ եւ 1,280 թօնօ գարտիֆ։ Վաճառեցաւ 1,500 թօնօ։ Պատրաստ 10,000 թօնօ։

## ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

**ԹԻՖԹԻՔ.** —Այս շաբթու վաճառեցաւ 180 հակ․ որոց 60 հակը Կրէտէ եւ ուրիշ առաջին տեսակք 19 1/2 ղրշ․ իսկ 120 հակը Սիվրի Հիսար Էնկիւրիւ երկրորդական ի գին 18—19 ղրշ․ օխան։ Պատրաստի 12,000 հակ։ Հրապարակը խիստ հանդարտ, գիները լքեալ Անգլիայէն եկած գէշ լուրերուն վրայ։

**ԲՈՒՐԴ.**— Այս շաբթու վաճառուեցաւ լաւ ապրանք 50,000 օխայ ի գին 4 1/8 ղրշ․ երրորդ տեսակին․ 6 1/8 ղրշ․ երկրորդ․ եւ 8 1/8 ղրշ․ առաջին տեսակին։ Հրապարակը հանդարտ է եւ գները թոյլ։

**ՄԵՏԱՔՍ.**— Վաճառեցաւ 4 հակ Քօքանտ ի գին 192 ղրուշ․ եւ 7 հակ Քութայիս 115-122 1/2 ղրշ․ 9 հակ Նուխի Փր․ 38 1/4–40 օխան։ Պատրաստ 250 հակ։ Հրապարակը հաստատ․ բաւական պահանջ կայ, բայց վաճառականք վաճառել չեն ուզեր, Ռուսիոյ ռուպլիի բարձրացման պատճառաւ։

**ԲԱՄԲԱԿ.**— Այս շաբթու վաճառումներ չեղաւ եւ հրապարակը հանդարտ։

**ՔԷՆՏԻՐ.**— Այս վաճառքը խիստ հանդարտ է․ միայն տեղական սպառման համար քիչ մը գործ կ'ըլլի։

**ԿԱՊԵՐՏ.**— Շաբթուս վաճառեցաւ 110 հատ «սէթճատէ» Շիրվան հին 40 Փրանք․ եւ 200 հատ զանազան ի գին 22 էն մինչ 50 Փրանգ հատը։ Պատրաստ 8500 կտոր ամէն տեսակէ։ Հրապարակը բանուկ է եւ բաւական գնող կայ, գիները հաստատ են, բայց վաճառականք կը դժկամակին վաճառելու։

**ԱՖԻՈՆ.**— Այս շաբթու վաճառեցաւ 1 կողով Մալաթիա սարին ի գին 220 ղրշ․ եւ 1 կողով հին Կէյվէ ի գին 140 ղրշ․ օխան․ հրապարակը հանդարտ է առանց գնորդի։

**ՔԻԹՐԷ.**—Վաճառեցաւ 5,000 օխայ որոց 1,000 օխան բնական ճերմակ Նիկտէ ի գին 20 ղրշ․ 2000 օխայ ստորին բնական ճերմակ 19–19 1/2 ղրշ․ 1000 օխայ լաւ դեղին, 18 1/4 ղրշ։ եւ 1,000 օխայ երկրորդ դեղին 10 1/2 ղրշ․ օխան։ Պատրաստ 35,000 օխայ։ Հրապարակը բաւական բանուկ է․ գիները միայուն են։

**ՄԱՀՄՈՒ ՁԻ.**— Նշանակելի կարեւոր գործ մը չէ եղած․ բայց գիները բարձրացած են։

**ՍԱԼԷՔ.**— Այս շաբթու վաճառեցաւ 800 օխայ՝ ի գին 20 1/2 – 21։ Պատրաստ 1500 օխայ․ կարեւոր վաճառումներ մը չէ եղած։

**ՄԵՂՐԱՄՈՄ.**— Վաճառեցաւ 600 օխայ ի գին 21 1/2 ղրշ․ օխան։ Պատրաստ 1100 օխայ․ հրապարակը հանդարտ է։

**ԿԱՂԻՆ.**— Այս շաբթու վաճառումներ չեղաւ։ Հրապարակը հանդարտ եւ թոյլ է։

**ՃԷՀՐԻ.**— Այս շաբթու վաճառեցաւ 12 պարկ Մարաշ ի գին 14 ղրշ․ եւ 18 պարկ Գայսար 13 3/4 օխան։ Պատրաստ 1,100 պարկ։ Հրապարակը հանդարտ է, գները միայուն։

**ՄԱԶԻ.**— Պատրաստ 250 պարկ սեւ տեսակ․ հրապարակը գնողներ կան եւ գները բարձրացած են։

**ՄՈՐԹ.**— Այս շաբթու մորթի վրայ ամենեւին նշանակելի գործ չեղաւ։

**ԿՈՒԼՈՒ ՄՈՐԹ.** —Այս շաբթու վաճառեցաւ 1,000 կտոր Ասիոյ չոր մորթ Բէլէւլ ի գին 9 ղրշ․ օխան։ Հրապարակը բանուկ է։

**ԱՅԾԻ ՄՈՐԹ.** —Տեղական ապրանք չկայ։ Վաճառում չեղաւ։

**ՈՉԽԱՐԻ ՄՈՐԹ.** — Գործ մը չէ եղած այս տեսակին վրայ պատրաստ չկայ։

**ԳԱՌԱՆ ՄՈՐԹ.** —Վաճառեցաւ այս շաբթու 26,000 հատ Թուլում, ի գին 16 1/2 զոյգը։ Հրապարակը բանուկ է։

## ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆԵՐ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ցորեն Կիրգա Ռուսիոյ | Լիպրայ | 57—59 | Ղ.շ | 22 — 24 1/2 | Քիլէն |
| » » Դանուբի | » | 57—59 | » | — — | » |
| » Կակուղ Կալաց եւ Պրայլա | » | 57—59 | » | 19 — 20 1/2 | » |
| » » Պուլղարիոյ | » | 57—58 | » | 19 — 20 | |
| » » Ռումէլի | » | 57—58 | » | 19 1/2— 21 | » |
| Եգիպտացորեն, Կալաց, Իպրայիլ եւ Օտեսա | | | » | 13 — 13 1/4 | » |
| » » Օրտու եւ Տաճկական | | | » | 13 1/2— 13 3/4 | » |
| Գարի կակուղ | | | » | 11 1/2— 12 | » |
| » հաստ | | | » | 11 — 12 | » |
| Ջավտար | | | » | 12 — 12 1/4 | » |
| Քթանահունտ (քէթէն թօհումը) | | | » | 22 — 31 | » |
| Քանար եէմի | | | Փրյ | 59 — 60 | Օխայ |
| Նօխուտ Պալքէսէր | | | » | 43 — 48 | » |
| » Աթէնք | | | » | 50 — 55 | » |
| Քէնտիրի հունտ | | | » | 80 — | » |
| Պակլա | | | » | 31 — | » |
| Սուսամ Մուտանիա | | | » | 95 — 100 | » |
| » Մէրսին | | | » | 100 — 106 | » |
| Աֆիոնի հունտ | | | » | 55 — | » |
| Լուբիա Օրտու | | | » | 120 — 140 | 100 » |
| » Դանուբ | | | » | 130 — 145 | » » |
| Օտեսա Ա. Ալիւր | | | Ղրշ | 122 — 127 | Պարկը |
| » Բ. » | | | » | 110 — 117 | |
| » Գ. » | | | » | 97 — 100 | » |
| Ազիմա | | | » | 92 — 94 | » |
| Պրայլա տեղականի հետ խառնուած | | | » | 75 — | » |
| Պրայլա | | | » | 82 — 85 | » |
| Վառնա | | | » | 73 — 76 | » |
| Շըմէնտըֆէր | | | » | 75 — | » |
| Խահֆէ | | | Ղ.շ | 820—860—9· 00 | Օխյ· 100 ոսկին |
| Լեհակ պէնկալ | » | 100—140 | » | » | » |
| » Քուրպայ | » | 37—100 | » | » | » |
| Որդան կարմիր թասը | » | 16—18 | » | » | » |
| » կարմիր ճերմակ | » | 14—16 | » | » | » |
| Բիբէր | » | 11 | | » | » |
| Կինամոն (դարչին) | » | 5 1/2— 6 | » | » | » |
| Գարէնֆիլ | » | 9—10 | » | » | » |
| Թէյ սեւ ստորին | » | 12— 17 | » | » | » |
| Թէյ առաջին եւ լաւ | » | 23— 88 | » | » | » |
| Շաքար Հոլանտայ | » | 180 | կենդինարը | 105 | » |
| » Տրիէսթէ Ա. (պարկի մէջ) | » | 180 | » | » | » |
| » » Բ. ( » ) | » | 168 | » | » | » |
| » » Գ. ( » ) | » | 162 | » | » | » |
| Ծծումբ | » | 37— 58 | » | 100 | » |
| Խունկ (Գիւնլիւք) | » | 220—240 | » | » | » |
| Բրինձ Իտալիոյ Ա. Ռիզօն | Ֆրանգ | 43 | Պարկը | » | » |
| » » Բ. » | » | 41 | » | » | » |
| » » Աստրական | » | 39 | » | » | » |
| » » Բ. » | » | 47 | » | » | » |
| » » Գ. » | » | 45 1/2 | » | » | » |
| » Հնդկական | Ղրշ | 120—124—127 | » | » | » |
| Գօլա Գաղիական | » | 3 3/4 | Օխյ | » | » |
| » Անգղիական | » | 180 | Սնտուկը | » | » |
| Մոմ | Ղրշ | 8 | Քիլօ | » | » |
| ,, Գաղիական | ,, | 100 11 | » | » | |
| Կազ Ամերիկայի սնտուկ | » | 35—38 | » | » | » |
| » Ռուսիոյ | » | 37 | » | » | » |
| » » (վարելի մէջ) | Փարայ | 45 | Օխյ | » | » |
| Ոգի Ռուսիոյ Օլատոֆքա | Օխայ | 25 — | | | 1 Ոսկւոյ |
| » » Սոտինսքի | » | 25 — | | | » |
| » » Խարքով | » | 26 1/2 —27 | | | » |
| » Վար տեսակ Սէլանիկ եայն | » | 34 —35 | | | » |
| Ռոմ Թրիեսթէ | Կալլօն | 19 — | | | » |
| Անգլիոյ | | 9 1/4—9 1/2 | | | » |
| Անգղիական երկաթ (չուպուգ) | | 46 | | | կենդինարը |
| » Երկաթ (ակմէտ) | | 45 | | | » |
| Շուէտի » (չուպուգ) | | 72 — | | | » |
| » » (ակմէտ) | | 75 | | | » |
| Տախտակ» (Սաճ) թիւ 1— 4 | | 60 — | | | » |
| » » » » 5—10 | | 67 — | | | » |
| » » » » 11—14 | | 74 — | | | » |
| Կիր | | 88 | | | » |
| Չէմպէր սովորական | | 58 | | | » |
| » Մեծ դիրք | | 65 —66 | | | » |
| Անագ (դալայ) | | 590—600 | | | » |
| Կապար (տաչմա) | | 112— | | | » |
| » Տախտակ | | 120— | | | » |
| » Խողովակ | | 120— | | | » |
| Ձելիք | Ղրշ | 132— | | | Սնտուկը |
| Գարֆիցա . . . 45 գիլոնոց | » | 59— 61— | | | Վարելը |
| Թէնէքէ | » | 197— | | | 2 Սնտուկը |
| Պղինձ | » | 12 1/4–12 3/4 | Օխյ | | » |
| Ճինկօ | Ֆրանգ | 72— 73 | | | 100 Օխյ |
| Հանգածուխ Նիւքասըլ (ի վաճառատան) | | 21 Շ. 0 Բ. — 22 Շ. 0 Բ. | | | Թօնօն |
| » » » (ծովու վրայ) | | 22 » 6 » — 23 » 6 » | | | » |
| » » Գարտիֆ (ի վաճառատան) | | 22 » 0 » — » 0 » | | | » |
| » » » (ծովու վրայ) | | 25 » 0 » — 24 » 0 » | | | » |
| » » Հարթլբուլ | | 18 » 0 » — 19 » 0 » | | | » |
| Լիվէրբուլ | | 16 » 0 » — 17 » 0 » | | | » |
| Մահուտի | Ղրշ | 6 — 6 1/2 | | | Լիպրան Ոսկի 100 |
| Ամերիկան ամբողջ եարտա | » | 5 1/2— 6 | » | » | » |
| » պակասաւոր | » | 4 — 5 1/2 | » | » | » |
| Ամթարցու (լօնկ գլօթ) լաւ տեսակն | » | 4 5/8 — 5 | » | » | » |
| » » » փոքր լիպրա | » | 5 1/8– 5 1/2 | » | » | » |
| » » » ներկուելու (գօրինքթըն) | » | 5 3/8– 5 1/2 | » | » | » |
| Եէլքէն պէզի լաւ տեսակ | » | 4 1/2– 4 3/8 | » | » | » |
| » » միջին տեսակ | » | 4 1/4– 4 3/8 | » | » | » |
| » » ստորին | » | 4 5/8– | » | » | » |
| Խամ մատապօլ (չըլթըկ) լաւ տեսակ | » | 38 — 48 | Թօփը | » | » |
| » » » միջին » | » | 50 — 60 | » | » | » |
| » » » միջին » | » | 60 — 68 | » | » | » |
| Միւլ 4 թիւ (չափալը) 3 թօփը (30-35-38 ինչ) | Ղրշ | 43 | | » | 112 |
| » 16 » (Թէնզիֆ) » » ( . . . . . . . ) | » | 40 | | » | » |
| » 26 » (Աբօլիա) » » ( . . . . . . . ) | » | 53 | | » | » |
| Մանած վալթէր . . . 4—14 | Ղրշ | 35—38 | փաքէթը | » | 106 |
| » » . . . 18—28 | » | 45—48 | » | » | » |
| » Էքրոլա (Ֆլէմէնկ) 4—14 | » | 40—53 | » | » | » |
| » » ( . . . . ) 18—28 | » | 48—59 | » | » | » |
| » Էքրոլա գրօմիթօն 16—24 | » | 63—64 | » | » | » |
| » Մալի . . . 8—14 | » | 53—57 | » | » | » |
| » » . . . 20—24 | » | 67—71 | » | » | » |
| » Կարմիր Իտալիոյ 4—14 լաւ | » | 75—86 | » | » | » |
| » » » . . . »— երկրորդ | » | 60—65 | » | » | » |
| » » Զուիցերիոյ թիւ 20 | » | 68—75 | » | » | » |
| » » Իտալիոյ » » | » | 80—87 | » | » | » |
| Թիֆթիք առաջին տեսակ | Ղ.շ | 20 — | օխյ | 100 | ոսկի |
| » երկրորդ » | » | 17 3/4– 19 1/4 | » | » | » |
| » ստորին » | » | 6 — 13 | » | » | » |
| » Վան | » | 12 1/2– 13 1/2 | » | » | » |
| Բուրդ Քասապ պաշի Ա. | » | 8 3/8– 4 3/8 | » | » | » |
| » » » Բ. | » | 8 — 4 | » | » | » |
| » Քըրքմա . . . Ա. | » | 6 1/4 – 6 3/4 | » | » | » |
| » » . . . Բ. | » | 5 1/2 – 6 | » | » | » |
| Մետաքս Խօքանտ | » | 185 —205 | » | » | » |
| » Նուխի | Ֆրանք | 36 — 39 | » | » | » |
| » Ռէշտ | » | 25 — 31 1/2 | » | » | » |
| Բամպակ Հալէպ | Ղ.շ | 5 1/2 | | » | » |
| » Ատանա | » | 6 — 6 1/8 | | » | » |
| » Իզմիր եւ շրջակայք | » | 6 1/8– 6 1/2 | | » | » |
| Աֆիոն Մալաթիա | » | 250 — 255 | » | » | » |
| » Սէլանիկ | » | — | » | » | » |
| » Զիլէ Թօքաթ | » | 230 —240 | » | » | » |
| » Պալըքէսէր | » | 170 —175 | » | » | » |
| » Էնկիւրիւ | » | 155 —160 | » | » | » |
| » Նալը խան Պէյ պազար | » | 150 —155 | » | » | » |
| » Կէյվէ Պիլէճիք | » | 150 — | » | » | » |
| » Զըքընթը | » | 110 —135 | » | » | » |
| Քիթրէ առաջին ճերմակ | » | 27 — 29 | » | » | » |
| » աղտոտուած ճերմակ | » | 24 — 25 | » | » | » |
| » լաւ բնական » | » | 21 — | » | » | » |
| » սովորական » | » | 19 — 20 | » | » | » |
| » լաւ դեղին | » | 17 — 18 | » | » | » |
| » երկրորդ դեղին | » | 15 — 16 | » | » | » |
| » Զամուր | » | 4 — | » | » | » |
| Սալէպ լաւ տեսակ | » | 16 1/4– 17 | » | » | » |
| » երկրորդ տեսակ | » | 14 1/2– 15 | » | » | » |
| Մահմուզիյէ առաջին ճերմակ | » | 220 —240 | » | » | » |
| » երկրորդ | » | 100 —120 | » | » | » |
| » երրորդ | » | 60 — 80 | » | » | » |
| Մեղրամոմ լաւ տեսակներ | » | 20 — 22 | » | » | » |
| » ստորին » | » | 18 — 19 | » | » | » |
| Կաղին Տրապիզոն | » | 122 — | կենդինար | » | » |
| » Քէրասունի | » | 120 — | » | » | » |
| Ճէհրի Էկին | » | 14 — 15 | Օխյ | » | » |
| » Գայսար | » | 14 1/2—15 | » | » | » |
| » Անկորա | » | 13 1/2–14 | » | » | » |
| » Թօքաթ | » | 12 1/2—13 1/2 | » | » | » |
| » Զօրում | » | 12 1/2 – | » | » | » |
| » Վար տեսակներ | » | 00 — | » | » | » |
| Եղջիւր | » | 5 — 5 1/2 | | » | » |
| Մորթ գոմէշի չոր | » | 10 1/4—10 3/4 | | » | » |
| » թաց | » | 6 3/4– 7 | | » | » |
| » կովի չոր | » | 10 —10 2/8 | | » | » |
| » թաց | » | 6 3/4— 7 1/2 | | » | » |
| » Ոչխարի | » | 18 — 22 | | » | » |
| » Այծի | » | 18 — 20 | | » | » |
| » Գառին | » | 14 —16 1/2 | | » | » |
| » Այծուկի | » | 00 — | | » | » |
| » Նապաստակի | » | 00 — | | » | » |

### ԱՂՕԹԱԳԻՐՔ

ԸՍՏ
ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ
Պարգեւեալ
Ի ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅԷ ՄԿՐԵԱՆ
Հրամանաւ
Տ. ՆԵՐՍԷՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ Կ. ՊՈԼՍՈՅ
ԵՒ
ՀԱՃՈՒԹԵԱՄԲ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՏԵՆԻ

Սոյն պատուական Աղօթագիրքը կը պարունակէ մեր Եկեղեցւոյ բովանդակ ժամերգութիւններն։ Նախ կիրակի օրերու՝ հանդերձ խորհրդով Ս. Պատարագի, եւ ապա կարգաւ՝ Լուր օրերու, Արեւագալի, Ճաշու, Խաղաղական եւ Հանգստեան (Եկեղեցէի) ժամերգութիւնքն, իւրաքանչիւրոց մէջ գտնուած Քարոզներուն եւ Աղօթքներուն աշխարհաբառ թարգմանութիւններովը։ եւ Ս. Պատարագի խորհրդոյն բացատրութիւններով։

Գրքին սկիզբը գրուած է Ամենապատիւ Տ. Ներսէս Ս. Պատրիարքի մի նշանաւոր նամակն ի հաւանութիւն գործոյս եւ իբրեւ ներածութիւն օգտակարութեան աղօթից, որ եւ ընտիր իմաստիւքն՝ մասնաւոր վերծանութեան արժանի է։

Ետեւ որոյ գրուած է աշխատասիրող Քահանային Յառաջաբանն, յորում մեր Ազգային Եկեղեցին իւր Քրիստոնէական սրբութեամբ մեզ աւանդող մեր Երանելի Նախահարց պատրաստած Աղօթքներէն զատ՝ օտար Աղօթքներ գործածելու անպատեհութեան վրայ խօսելով, Հրապարակական եւ Առանձնական Աղօթից վրայ պիտանի տեղեկութիւններ կուտայ, եւ կը յորդորէ վարժուիլ, ընտանենալ մեր Եկեղեցւոյ աւանդութեանց, եւ Ազգային գրական լեզուին, եւ սիրել զանոնք իբրեւ անգին յիշատակք մեր անմոռանալի Նախնեաց։

Սոյն Աղօթագիրքն՝ որ պիտի ծառայէ ժողովրդեան Աստուածպաշտութիւնն աւելցնելու, եւ մեր Քրիստոնեայ–Ազգային Եկեղեցին ճանաչել տալու, պիտի կարենայ գործածուիլ թէ՛ Եկեղեցւոյ մէջ իբրեւ Ժամագիրք, եւ թէ տուներու եւ ճամբորդութեանց մէջ իբրեւ Աղօթագիրք, ուստի ամեն Հայ - Քրիստոնէի քով գտնուելու արժանի է։

Տպագրութիւնն ընտիր թուղթի վերայ ի վերեւ տեսնուած գիրքով՝ յատուկ խնամով եղած է 690 երեսներէ բաղկացեալ. եւ Նորաքանդակ պատկերներով զարդարեալ՝ գեղեցիկ տեսակաւ կազմուած է։

Կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց քով, իսկ կեդրոնատեղին է Արամեան Տպարան, Յակոբեան խան թիւ 13, հետեւեալ որոշեալ գներով.

| | |
|---|---|
| Լաթակազմ պարզ | 15 ղրշ. |
| Լաթակազմ ոսկեզօծ | 22 » |
| Կաշեկազմ ոսկեզօծ | 30 » |
| Մետաքսեայ փառակազմ | 40 » |

Արտօնատէր, Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՃԱՐԵՃ
Ղալաթիա, Քիւրեքճիլէր փողոց, Թիւ 41